ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

www.syuniacyerkir.am

Սյունյաց երկիր

№ 19 (649)
28 ՆՈՅԵՄԲԵՐԻ
2025Թ.

Կապանի արվեստի պետական քոլեջը 60 տարեկան է

ISSN 1829-3468

«Կապանի արվեստի
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
պատկերանիշը (լոգո)

Կապանի արվեստի պետական
քոլեջին շնորհված ոսկե
հուշամեդալը

ԻՍԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՇԱՄԵԴԱԼ

ՀՈՒՇԱՄԵԴԱԼ
925 ՈՐԱԿԻ ԱՐԾԱԹԻՑ Է,
ՈՍԿԵՊԱՏՎԱԾ,
ՔԱՇԸ 33,0 Գ.

ԿԱՊԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐԱԾ
ՄԵԾԱԳՈՒՅՆ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ

ԵՎ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 40-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

«____» 10 հոկտեմբերի 200 թ. հր. 530-Ա

ՆԱԽԱՐԱՐ Մ. ԵՐԻՑՅԱՆ

Սիշիսարի ամենահին երաժշտական գործիքներից մեկը կամ «երաժշտական գործիքների թագուհին»՝ երգեհոնը, 1976 թվականին իր հանգրվանը գտավ Կապանի երաժշտական ուսումնարանում (ներկայումս՝ Կապանի արվեստի պետական քոլեջ):

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ԾՈՎԻՆԱՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտորի պաշտոնակատար, Արվեստագիտության թեկնածու, դոցենտ

Հարգարժան պարոն Խաչատրյան

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական խորհրդի և ռեկտորատի, անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում ենք ձեզ՝ Կապանի արվեստի քոլեջի հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ:

Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան տասնամյակներ շարունակ, հիմնադրման օրվանից, համագործակցել է Կապանի արվեստի քոլեջի հետ: Տասնամյակների ջերմ, հոգատար ու նվիրումով լի ճանապարհ է անցել Կապանի քոլեջը Մայր բուհի վաստակաշատ մասնագետների հետ, որոնց համար քոլեջում անցկացրած տարիները եղել են ոչ միայն լուրջ մասնագիտական կայացման, առաջին ինքնուրույն մանկավարժական փորձառության բարդ ու պատասխանատու փուլը, այլև երիտասարդության անմոռանալի տպավորությունների հարուստ հուշագրությունն են խորհրդանշում:

Քոլեջի տաղանդաշատ շրջանավարտների քանի-քանի սերունդ իրենց կրթությունը շարունակել է Երևանի կոնսերվատորիայում, նրանցից շատերը կատարողական վարպետությամբ զարդարում են հայրենական և միջազգային բեմահարթակները, իսկ ամենանվիրյալները, վերադառնալով իրենց ծննդավայրը, ստացած գիտելիքն ու կարողությունը փոխանցում են երիտասարդներին՝ անմնացորդ ծառայելով հարազատ կրթօջախին, շարունակելով նրա հարուստ ավանդույթները:

Անուրանալի է Կապանի արվեստի քոլեջի վաստակը ոչ միայն տարածաշրջանի երաժշտական արվեստի զարգացման ասպարեզում, այլև հայրենի մշակութային ժառանգության պահպանման ու հարատևման գործում:

Շնորհավորելով քոլեջի 60-ամյակի առթիվ, մանկավարժական անձնակազմին մաղթում ենք ստեղծագործական հաջողություններ և բարգավաճում՝ տաղանդաշատ պատանի երաժիշտների հայտնաբերման ու դաստիարակման շնորհակալ գործում:

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Դիրիժոր, ՀՀ վաստակավոր արտիստ, «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանակիր, Կապանի երաժշտական ուսումնարանի նախկին սան

Ջերմորեն շնորհավորում եմ Կապանի երաժշտական ուսումնարանի (ներկայումս՝ Կապանի արվեստի պետական քոլեջ) տնօրենությանը, մանկավարժներին, ուսանողներին և շրջանավարտներին՝ քոլեջի հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ, մաղթում նորանոր հաջողություններ և նվաճումներ:

60 տարի առաջ Հայաստանի ղեկավարությունը որոշեց Սյունիքում հիմնել երաժշտական ուսումնարան: Այդ որոշումն ուներ խիստ կարևոր նպատակներ. հնարավորություն ստեղծել տաղանդավոր երիտասարդների համար, ստանալ որակյալ մասնագիտական կրթություն, գրավիչ դարձնել Սյունիքում ապրելն ու ստեղծագործելը, բարելավել ժողովրդագրական իրավիճակը և այլն: Բացի նյութական միջոցներ հատկացնելուց՝ անհրաժեշտ էր նաև արհեստավարժ երաժիշտ-մանկավարժների գործուղումը Կապան՝ հիմնադրելու և կայացնելու այս կարևոր կառույցը: Առաջիններից էին հիմնադիր-տնօրեն, թավջութակահար Արտյոմ Մարջանյանը, ջութակահարներ Հենրիկ Սմբատյանն ու Արմեն Մարջանյանը, դաշնակահարներ Արամ Կարապետյանը, Ռուբեն Սարյանը, Սերգեյ Սարաջևը և այլք:

Դժվար է գերագնահատել Կապանի արվեստի պետական քոլեջի վաստակն ու դերը մեր երկրի կրթամշակութային կյանքում: Երբեմնի սաներն ու շրջանավարտներից շատերն այսօր էլ գործում են որպես արվեստի, երաժշտության մշակներ՝ երախտագիտությամբ լցված դեպի իրենց հարազատ կրթօջախը:

Կրկին շնորհավորելով՝ հորդորում եմ մանկավարժներին և ուսանողներին՝ լինել նվիրյալ, չընկրկել դժվարությունների առջև, պահպանել 60-ամյա հաստատության ավանդույթներն ու հեղինակությունը:

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
Կապան համայնքի ղեկավար

Հարգելի կապանցիներ

Լավագույն բարեմաղթանքներով շնորհավորում եմ Կապանի արվեստի պետական քոլեջի հիմնադրման 60-ամյակը:

Քոլեջն իր ստեղծման առաջին օրվանից հանդիսացել է մեր քաղաքի կրթամշակութային կյանքի առանցքային շարժիչ ուժերից մեկը՝ դառնալով սերունդների համար մշակութային ուղի հարթելու և գեղագիտական բարձր ճաշակ ձևավորելու մեկնակետ: Հատկանշական է, որ կրթօջախն այս տարիների ընթացքում հավատարիմ է մնացել իր առաքելությանը՝ շարունակաբար պահպանելով արվեստի, երաժշտության հանդեպ սեր սերմանելու, գեղարվեստական արժեքներ փոխանցելու և մասնագիտական կայացման ամուր հիմքեր ստեղծելու իր կարևոր դերակատարումը:

Այս ամենի խոսուն վկայությունն են կրթօջախի բազմաթիվ շրջանավարտները, ովքեր տարիների ընթացքում ձեռք բերած մասնագիտական գիտելիքներով և հմտություններով այսօր աշխատում են համայնքի երաժշտական և արվեստի դպրոցներում՝ իրենց փորձն ու ստեղծագործական մոտեցումները փոխանցելով նոր սերունդներին և նպաստելով համայնքում կրթամշակութային միջավայրի շարունակական զարգացմանը:

Անշուշտ, Կապանի արվեստի պետական քոլեջի ձեռքբերումներն ակնհայտ են. տարբեր ոլորտներում աչքի ընկնող շրջանավարտներ, մրցունակ մասնագիտական պատրաստվածություն ունեցող սաներ և հանրային գնահատանքի արժանացած դասախոսական կազմ, ովքեր արդեն տարիներ շարունակ պահպանում են որակի բարձր նշաձողը:

Այս նշանակալի առիթի կապակցությամբ ևս մեկ անգամ շնորհավորում եմ արվեստի պետական քոլեջի ողջ անձնակազմին՝ հույս հայտնելով, որ երաժշտական բազմամյա ավանդույթներ ունեցող այս կրթօջախը կշարունակի իր անշեղ ընթացքը՝ կրթելով ապագա անվանի և նվիրյալ երաժիշտների, ովքեր իրենց գործունեությամբ կծառայեն համայնքի մշակութային վերելքին:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ոսկե մեդալակիր՝ Կապանի 60-ամյա արվեստի պետական քոլեջն անջնջելի տարեգրություն ունի: Փաստ, որը կհիշվի, կարձանագրվի Այունյաց աշխարհի և նրա գողտրիկ ոստան Կապանի պատմության էջերում:

Շնորհավորելով քոլեջի հոբելյանի կապակցությամբ, շնորհակալությունս եմ հայտնում բոլոր այն մանկավարժներին, դասախոսներին, ուսումնաօժանդակ անձնակազմին, ովքեր իրենց նվիրական աշխատանքով կերտել են կրթօջախի 60-ամյա փառավոր ուղին:

Հարգանք նրանց հիշատակին, ովքեր չկան:

Հարգանք բոլոր նրանց, ովքեր կան և շարունակում են ապրել սիրելի կրթօջախի ներկայով:

Շնորհակալությունս եմ հղում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ու հատկապես նախարարության այն պատասխանատուներին, ովքեր զբաղվում են միջին մասնագիտական և նախնական արհեստագործական կրթության հարցերով:

Եվ, իհարկե, շնորհակալություն բոլոր այն պետական կառույցներին, անձանց և կազմակերպություններին, ովքեր, գիտակցելով Կապանի արվեստի պետական քոլեջի դերն ու նշանակությունը տարածաշրջանում, արել և անում են հնարավորը՝ մեր կրթօջախի խնդիրները լուծելու համար:

Խոսելով քոլեջի 60-ամյակի մասին՝ հնարավոր չէ չիպարտանալ այն ճանապարհով, որն անցել է մեր կրթօջախը: Դրա վառ ապացույցներից է այն իրողությունը, որ մասնագիտական և հանրակրթական դպրոցների սովորողներն իրենց ապագայի տեսլականը կապում են Կապանի արվեստի պետական քոլեջի հետ, ուսանողները մասնակցություն են ունենում միջազգային և հանրապետական մրցույթների, փառատոների, գիտաժողովների, ցուցահանդեսների՝ արժանանալով բարձր պարգևների, իսկ շրջանավարտներն իրենց ուսումն են շարունակում բուհերում, մասնագիտական գործունեություն ծավալում ոչ միայն Կապանում և Այունիքի մարզում, այլև նրա սահմաններից դուրս: Նշանակում է՝ մենք ճիշտ ուղու վրա ենք: Դիմակայելով ժամանակի մարտահրավերներին՝ քոլեջը շարունակում է պահպանել ինքնատիպությունն ու ուրույն տեղը հանրապետության կրթամշակութային կյանքում:

Շնորհավորանքս եմ հղում նաև բոլոր տարիների շրջանավարտներին, ուսանողներին, նրանց ծնողներին, պետական և հասարակական կառույցներին, որոնց հետ համագործակցում ենք ու նորանոր ծրագրեր կազմում մեր հետագա ընթացքի համար:

Շնորհավորանքս եմ հղում Կապան համայնքի բնակիչներին, Կապանի համայնքային իշխանությանը, քանզի մեր անցած 60-ամյա ճանապարհին միշտ զգացել ենք կապանցու սերն ու հարգանքը: Այնպես որ՝ սխալված չեմ լինի, եթե ասեմ՝ այս հոբելյանը տոն է նաև Կապանի ու կապանցու համար:

Ուրեմն և՝ շնորհավոր տոնդ՝ Կապան, շնորհավոր տոնդ՝ Այունիք, շնորհավոր տոնդ՝ Կապանի արվեստի պետական քոլեջ...

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ

ԴԱՎԻԹ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱԺ պատգամավոր

Ուրտանց շնորհավորում եմ Կապանի արվեստի պետական քոլեջի ողջ անձնակազմին, ուսանողներին և շրջանավարտներին՝ հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ:

Հիրավի, քոլեջը անցել է նշանակալի ճանապարհ, կայացման և զարգացման կարևոր փուլեր: 60 տարվա ընթացքում ձևավորվել և ամրապնդվել են կրթօջախի ավանդույթներն ու արժեքները: Արվեստի պետական քոլեջը մշտապես փայլել է իր սաների տաղանդով, կազմակերպած միջոցառումների որակով և բարձր մակարդակով: Այն կապանյան մշակութային միջավայրի ամենակարևոր հատվածն է, որում մշակվում, հղկվում և ադամանդի նման փայլում է արվեստը: Այս միջավայրում է ձևավորվում քաղաքակիրթ մարդու և բարեխիղճ քաղաքացու նկարագիրը:

Անձնական ջերմ վերաբերմունք ունեմ արվեստի պետական քոլեջի նկատմամբ, քանի որ հայրս՝ գեղանկարիչ Հրանտ Դանիելյանը, ներդրում է ունեցել քոլեջում՝ գեղարվեստի զարգացման գործում: Նա յուրահատուկ ակնածանք և հարգանք էր տածում քոլեջի դասախոսական կազմի նկատմամբ, ընդգծում էր ձևավորված ավանդույթների կարևորությունը:

ԽՍՀՄ շրջանում քոլեջը միտումներ և աշխատառճ է թելադրել ոչ միայն Կապանում, այլև տարածաշրջանում: Այսօր էլ պետք է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի քոլեջն իրացնի իր ողջ ներուժը: Այս առումով կարևոր է քոլեջի շենքային պայմանների բարելավումը, ժամանակակից աշխարհի պահանջներին հատուկ նյութատեխնիկական բազայի ապահովումը: Հատկապես կարևոր է միջազգային վաստակ և ճանաչում ունեցող մասնագետների այցերի կազմակերպումը, նրանց կողմից դասախոսությունների և վարպետաց դասերի կազմակերպումը: Միջազգային փորձի և հմտությունների զարգացման նպատակով ուսանողների համար պետք է ստեղծել աշխարհի լավագույն կրթօջախներում վերապատարստումներ անցնելու հնարավորություն:

Վերը նշված բոլոր հարցերն իմ ուշադրության կենտրոնում են, դրանց իրականացման ուղղությամբ աշխատում եմ թե ԿԳՄՍ նախարարության և թե մյուս գերատեսչությունների հետ:

Բարի տարեդարձ և նորանոր նվաճումներ՝ Կապանի արվեստի պետական քոլեջին:



ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ (ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ)
Քոլեջի նախկին դասատու

Շնորհավորում եմ արվեստասեր այունեցիներին և կապանցիներին՝ Կապանի արվեստի պետական քոլեջի հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ:

Քոլեջի (նախկին երաժշտական ուսումնարանի) բացումը հիրավի օրհնություն էր Այունյաց աշխարհին: Քանի-քանի ազնիվ սերունդներ են կրթվել այստեղ՝ դաշնակահարներ, ջութակահարներ, ֆլեյտահարներ, երգիչներ և այլք: Ինչպես ծաղիկն է գերում մեղուներին, այնպես էլ քոլեջի մթնոլորտը, հոյակապ համերգասրահը, փառահեղ երգեհոնը հրապուրում են տարբեր երկրների երաժիշտներին, արվեստագետներին, ովքեր պարբերաբար այցելում են Կապան և հանդես գալիս համերգներով ու վարպետաց դասերով:

Այսօր էլ քոլեջը շարունակում է գործել, շարունակում են ղողանջել Բախի, Բեթհովենի, Կոմիտասի, Արամ Խաչատրյանի և այլ մեծերի երաժշտության հնչյունները, և արձագանքվելով Խուստուփի լանջերից, ավետիս են տալիս աշխարհին: Արդյոք տեղին չէ՞ բրիտանացի դիրիժոր Ջոն Էլիոթ Գարդիների իմաստուն խոսքը՝ այն է. **«Որտեղ հնչում է Բախ, այնտեղ է Աստված»: Տեղին է նաև Կոմիտասի հրեղեն խոսքը, որը, կարծում եմ, պիտի լինի քոլեջի վերելքի նշանաբանը. «Որքան ապրի հայկական երաժշտությունը, այնքան կապրի Հայաստանը»:**

Սիրելի բարեկամներ, կրկին շնորհավորում եմ մեր նվիրական տոնի առթիվ:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
«Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահ

Սիրելի՛ ուսանողներ, հարգելի դասախոսներ, շրջանավարտներ, գործընկերներ:

Սրտանց շնորհավորում եմ Կապանի արվեստի պետական քոլեջի 60-ամյակը:

Վաթսուն տարի շարունակ քոլեջը եղել է արվեստի, մշակույթի, դպրության և ստեղծագործ մտքի օջախ՝ կրթելով տաղանդավոր պատանիներ ու աղջիկներ, ովքեր հետագայում իրենց գործունեությամբ պատվով ներկայացրել են թե Կապանը, թե Սյունիքի մարզը և թե Հայաստանի Հանրապետությունը:

Լինելով Կապանի արվեստի պետական քոլեջի կառավարման խորհրդի նախագահը, եղել եմ ու կամ քոլեջի վերջին տարիների ընթացքի և ականատեսը, և մասնակիցը, և պատասխանատուներից մեկը:

Քոլեջի հոբելյանը ոչ միայն գեղեցիկ տարեդարձ է, այլև բոլորիս համատեղ աշխատանքի, նվիրումի ու հավատարմության գրավականը: Տարիների ընթացքում կրթօջախը ձևավորել է արժեքներ, որոնք մեզ փոխանցում են սեր արվեստի նկատմամբ, հարգանք գիտելիքի և մարդու ստեղծագործ մտքի հանդեպ:

Թող այս հոբելյանը դառնա նոր հաջողությունների, համարձակ նախաձեռնությունների և նոր վերելքների սկիզբ:

Քոլեջի կոլեկտիվին մաղթում եմ անսպառ եռանդ, ստեղծագործական ոգի:

Միաժամանակ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել քոլեջի պատմության, զարգացման և հաջողությունների կերտման գործում:

ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասան, Կապանի արվեստի պետական քոլեջի շրջանավարտ

Կապանի արվեստի պետական քոլեջը կարևորագույն նշանակություն ունի ոչ միայն Կապանում ու Սյունիքում, այլև ամբողջ Հայաստանում:

60-ամյա քոլեջն իր պատմության մեջ ունեցել է բազում ուսանողներ և շրջանավարտներ, ովքեր հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Քոլեջից են սկսվել հարյուրավոր պատմություններ՝ լի նվիրվածությամբ, պայքարով և հաղթանակներով:

Կապանի արվեստի պետական քոլեջը շատ ավելին է, քան ուսումնական հաստատությունը. այն մշակույթի պահպանման և ստեղծման կարևոր օրգանիզմ է Սյունիքում: Նրա շնորհիվ Կապանը դարձել է Հայաստանի մշակութային կենտրոններից մեկը: Քոլեջի պատմությունը վկայություն է այն բանի, որ ճշմարիտ արվեստը սահմաններ չունի. այն ծաղկում է այնտեղ, որտեղ կա ազնիվ աշխատանք, նվիրվածություն և սեր:

Այսօր, երբ քոլեջը նշում է հիմնադրման 60-ամյակը, ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը կապել են այս կրթօջախի հետ՝ դասախոսներին, ուսանողներին, շրջանավարտներին: Ձեր աշխատանքի և նվիրումի շնորհիվ Կապանը ճանաչում են որպես մշակութային քաղաք, որպես արվեստի արարման ու տարածման կենտրոն:

Թող քոլեջի բեմում երբեք չմարեն լույսերն ու հնչյունները, թող այստեղ միշտ ծնվեն նոր անուններ, նոր երազանքներ ու նոր հաղթանակներ:

Շնորհավոր տարեդարձդ, սիրելի կրթօջախ, թող քո ճանապարհը շարունակվի նույն լուսավորությամբ, ինչով վաթսուն տարի ջերմացրել ես բոլորիս հոգիները:

ՍՅՈՒՆԵ ՁՀԱՆԳԻՐՅԱՆ
Կապանի արվեստի պետական քոլեջի ուսանողական խորհրդի նախագահ

Կապանի արվեստի պետական քոլեջի հարգելի տնօրենություն, սիրելի դասախոսներ, ուսանողներ, շրջանավարտներ, անձինք, ովքեր տարիների ընթացքում իրենց ներդրումն են ունեցել մեր կրթօջախի կայացման գործում:

Մենք՝ քոլեջի ներկայիս ուսանողներս, անչափ հպարտ ենք, որ քոլեջի 60-ամյակի տարեգիրն ենք: 60 տարի. այն ոչ միայն թիվ է, այլև մի ամբողջ պատմություն, որը լի է ձեռքբերումներով, կայացած արվեստագետների և մանկավարժների անցած ուղիով ու բազմաթիվ ստեղծագործական հաջողություններով:

Կապանի արվեստի պետական քոլեջը եղել և մնում է Սյունիքի մշակութային կյանքի անբաժանելի մասը, կրթության աղբյուր՝ արվեստն արժևորող և այդ ոլորտի հետ իրենց կյանքի ուղին կապող պատանիների ու երիտասարդների համար:

Մենք նախորդ սերունդների թողած ժառանգության կրողներն ենք: Քոլեջի պատերի ներքո ծնված յուրաքանչյուր նկարը, պարը, հնչած յուրաքանչյուր հնչյունն ու նոտան և բեմադրված ներկայացումը մեր և քոլեջի ապագայի գրավականն են: Այսօր մենք զգում ենք մեծ պատասխանատվություն՝ ապացուցելու, որ քոլեջի 60-ամյա պատմությունը ոչ թե ավարտ է, այլ մի նոր սկիզբ: Մենք պետք է պահպանենք և բազմապատկենք քոլեջի հաղթանակները՝ ձեռք բերած հարուստ գիտելիքներով, մասնագիտական բարձր պատրաստվածությամբ և նոր մտածողությամբ՝ գտնելով մեր արժանի տեղը կյանքում, դառնալով հինավուրց պատմություն և մշակութային բարձր արժեքներ ունեցող մեր երկրի ու ժողովրդի արժանի հետնորդներ:

Վստահ ենք՝ քոլեջի պատմության լավագույն էջերը դեռ առջևում են, դրանք գրելու ենք մենք և եկող սերունդները:

Կապանի արվեստի պետական քոլեջի դասախոսական և վարչական անձնակազմը (2025 թ.)

Կապանի արվեստի պետական քոլեջի (նախկինում՝ Կապանի երաժշտական ուսումնարան) տնօրենները

ԱՐՏՅՈՄ ՄԱՐՋԱՆՅԱՆ
(1965-1967 թթ.)



ԱՐՄԵՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
(1967-1993 թթ.)



ՌՈՄԵՈ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(1993-1999 թթ.)

ԼԻԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
(1999-2015 թթ.)

ՎԱՐԴԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ
(2015-2021 թթ.)

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(2021 թ. - Մ/Ա)

ՌԱՖԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԿԿ Կապանի շրջկոմի 1-ին քարտուղար (1965-78 թթ.)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐՋԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱ նախագահի տեղակալ, երաժշտական ուսումնարանի հիմնադիրներից

ԿԱՄՈ ՈՒԴՈՒՄՅԱՆ
ՀԽՍՀ մշակույթի նախարար (1967-1972 թթ.), երաժշտական ուսումնարանի հիմնադիրներից



ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժնի առաջին դասախոսներից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր (2002-2011 թթ.)

ՀԵՆՐԻԿ ՍՄԲԱՏՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի լարային բաժնի հիմնադիր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոռեկտոր

ՌՈՒԲԵՆ ՍԱՐՅԱՆ
Դաշնամուրային բաժնի դասատու

ԿԱՐԻՆԵ ԲԱԲԱՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի երգեցողության բաժնի հիմնադիր

ԱՆԺԵԼԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի երկարամյա ուսմասվար



ԳՐԵՏԱ ՂԱՁԱՐՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի «Խմբավարություն» բաժնի հինադիր դասախոս

ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

ՎԵՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Դաշնամուրային բաժնի դասատու

ՌՈՒԲԵՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի երաժշտության տեսության բաժնի դասախոս



ՄԵԼԻՔ ՄԱՎԻՍԱԿԱԼՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի երաժշտության տեսության բաժնի դասախոս

ՍԵՅՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի ակորդեոնի բաժնի հիմնադիր



ԱՐՏԱՇԵՍ ՂՈՒԼՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի հանրակրթական առարկաների բաժնի հիմնադիր



ՌՈԲԵՐՏ ԿԱՄՈՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի «Գեղանկարչություն» բաժնի հիմնադիր դասախոս



ՎԱՆՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի «Դիզայն» մասնագիտության հիմնադիր դասախոս

ՆԱՏԱԼՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Երաժշտական ուսումնարանի «Դերասանական արվեստ» մասնագիտության հիմնադիր դասախոս

ՀՐԱՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Գեղարվեստի մասնագիտությունների դասախոս

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Աշոտ Խաչատրյան. «Քոլեջն այսուհետ ևս կշարունակի մնայուն տեղ ունենալ հանրապետության կրթամշակութային կյանքում՝ պատվով կրելով իր խաչը»

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հարցազրույց Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Աշոտ Խաչատրյանի հետ

– Պարոն Խաչատրյան, շնորհավորում ենք Կապանի արվեստի պետական քոլեջի հիմնադրման 60-ամյակի բարեպատեհ առիթով: Կխնդրեինք հակիրճ անդրադառնալ կրթօջախի վեց տասնամյակով չափվող կենսագրությանը, Ձեր հաստատության՝ կարևորություն ներկայացնող հիշարժան տարեթվերին:

– Շնորհականություն շնորհավորանքի համար:

Օգտվելով առիթից, ուզում եմ մեջ բերել ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի խոսքը՝ նվիրված Կապանի երաժշտական ուսումնարանի 40-ամյակին. **«Անցած չորս տասնամյակում ուսումնարանը պատվով է կրել իր խաչը: Համոզված եմ՝ այսուհետ ևս իր դերը կկատարի պատշաճությամբ»:** Ասվածին կարող եմ հպարտությամբ ավելացնել՝ մինչ օրս Կապանի արվեստի պետական քոլեջը (նախկին երաժշտական ուսումնարան) շարունակում է պատվով կրել այդ խաչը:

«Սովետական Հայաստան» թերթի 1964 թ. հոկտեմբերի 9-ի համարում տպագրվեց Երևանի պետական կոնսերվատորիայի ջութակի դասատու Հենրիկ Սմբատյանի նամակը, որում նշում էր Զանգեզուրում երաժշտական ուսումնարան ունենալու անհրաժեշտության մասին: Այն դարձավ ժամանակի հրամայական. արդյունքում՝ 1965 թ. Կապանում իր դռները բացեց Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի մասնաճյուղը, որը 1966 թ. վերակազմավորվեց Ղափանի երաժշտական ուսումնարանի:

ՀՀ ԳԱ-ի նախագահի տեղակալ Ալեքսանդր Միսակի Մարջանյանը և ՀԿԿ Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռաֆայել Մինասյանը նշանակալի դեր են ունեցել երաժշտական ուսումնարանի հիմնադրման և կայացման գործում:

ՀՀ ԿԳ նախարարի 09.09.2002 թ. N 423-Մ հրամանի համաձայն՝ «Ղափանի երաժշտական ուսումնարանը» վերակազմավորվել է «Կապանի պետական երաժշտական ուսումնարան» ՊՈԱԿ-ի և համաձայն կառավարության 2005 թ. նոյեմբերի 3-ի 2074-N որոշման՝ «Կապանի պետական երաժշտական ուսումնարան» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ:

Կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար Կապանի պետական երաժշտական ուսումնարանը ՀՀ ԿԳ նախարարի 10.10.2005 թ. 530-Ա հրամանով պարգևատրվել է ոսկե հուշամեդալով:

Կապանի արվեստի պետական քոլեջը կրթական համակարգի զարգացման ներուժ ունեցող լիարժեք կառույց է, որի հիմնական առաքելությունն են կրթական ծրագրերի միջոցով գիտելիքների ստեղծումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը, փոխանցումն ու տարածումը, սովորողների ազգային, մշակութային և ստեղծագործական մտածելակերպի ձևավորումն աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, երիտասարդ սերնդի մտավոր և հոգևոր, բարոյական և համամարդկային արժեքների ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումներն ազգային շահերին համապատասխանեցնելուն ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական

Հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով

N	Մասնագիտությունը	Որակավորումը
1	0215.06.05 Գործիքային կատարողական արվեստ	Երաժիշտ-կատարող, դասավանդող
2	0215.01.5 Երգեցողություն	Երգիչ-կատարող
3	0215.02.5 Երգչախմբավարություն	Խմբավար, դասավանդող
4	0215.03.5 Երաժշտության տեսություն	Դասավանդող՝ երաժշտական առարկաների
5	0215.04.5 Էստրադային արվեստ	Դերասան՝ էստրադայի
6	0215.05.5 Պարարվեստ	Դերասան՝ ժողովրդական պարային համույթի
7	0215.07.5 Դերասանական արվեստ	Դերասան
8	0213.02.5 Գեղանկարչություն	Նկարիչ-դասավանդող
9	0213.03.5 Քանդակագործություն	Քանդակագործ-դասավանդող
10	0212.01.5 Դիզայն	Դիզայներ
11	0214.01.5 Կիրառական զարդարվեստ և ժող. արհեստներ	Նկարիչ-ձևավորող

ռազմավարության շրջանակում:

Գործունեության 60 տարվա ընթացքում քոլեջը տվել է 1975 շրջանավարտ, ովքեր այսօր էլ մասնագիտական գործունեություն են ծավալում ոչ միայն Հայաստանում, այլև հանրապետության սահմաններից դուրս:

Քոլեջը գործում է բաց և թափանցիկ, տեսանելի են նրա գործունեությունը և աշխատանքի արդյունքները:

Քոլեջն ունի քառահարկ մասնաշենք (երկրորդ հարկում տեղակայված է Կապանի Ա. Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցը), համերգային մեծ (երգեհոնային՝ 500 տեղ) և փոքր (80 տեղ) դահլիճներ, ցուցասրահ, պարի դահլիճ, գեղարվեստի մասնագիտությունների լաբորատորիա, լեզուների, պատմության, արվեստի պատմության կաբինետներ, հարուստ գրադարան, համակարգչային դասարան, կարիերայի կենտրոն, բուժկետ, հարմարեցված մարզադահլիճ և ապաստարան:

Այսօր քոլեջում սովորում են 122 ուսանող, իսկ նախամասնագիտական ուսուցման վճարովի խմբերում՝ 25 սովորող: Գործում են ուսումնական, երկսեռ և կամերային երգչախմբերը, ժողովրդական գործիքների և փողային նվագախմբերը, լարային քառյակը:

60 տարվա ընթացքում կրթօջախը գտնվել է պետական այրերի՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Սյունիքի մարզի և Կապան համայնքի ղեկավարության անմիջական ուշադրության կենտրոնում:

Քոլեջը, լինելով միակը տարածաշրջանում, պահպանում և տարածում է դասական երաժշտությունն ու գեղարվեստը, ժողովրդական երաժշտարվեստն ու երգը, երգչախմբային արվեստը, ակտիվացնում և զարգացնում է մշակութային կյանքը Սյունիքի մարզում:

Քոլեջի ուսանողները հաջողությամբ մասնակցություն են ունենում միջազգային և հանրապետական մրցույթների, փառատոների, գիտաժողովների, ցուցահանդեսների, սպորտլանդիաների, մրցաշարերի, էքսպոների՝ արժանանալով դափնեկիրների կոչման, մրցանակների, պատվոգրերի և շնորհակալագրերի:

– 2006 թ. կրթօջախի կյանքում տեղի ունեցավ կարևոր իրադարձություն, Կապանի երաժշտական ուսումնարանը վերանվանվեց Կապանի արվեստի պետական քոլեջի. սոսկ ցուցանակի փոփոխությո՞ւն էր դա, թե՞...

– Ժամանակի հրամայականով՝ 2006 թվականին քոլեջի նախկին տնօրեն Լիանա Հակոբյանի նախաձեռնությամբ, համաձայն կառավարության 2005 թ. նոյեմբերի 3-ի 2074-Ն որոշման՝ «Կապանի պետական երաժշտական ուսումնարան» ՊՈԱԿ-ը վերանվանվեց «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ, որտեղ երաժշտական մասնագիտություններին զուգահեռ ներդրվել են «Պարարվեստ», «Դերասանական արվեստ» և գեղարվեստի մի շարք մասնագիտություններ: Այն միայն անվան կամ ցուցանակի փոփոխություն չէր, այլ քայլ, որի արդյունքում քոլեջն ընդլայնեց մասնագիտությունների ցանկը՝ դրանով իսկ կրթություն ապահովելով ոչ միայն երաժշտության, այլ նաև արվեստի այլ ճյուղերի գծով դիմորդների համար: Այդ փոփոխության շնորհիվ, միաժամանակ, ավելացավ ուսանողների թիվը, քանզի այսօր ուսանողների 57,3 տոկոսը սովորում է «Գեղանկարչություն» և «Դիզայն» մասնագիտություններ, 18 տոկոսը՝ «Պարարվեստ» և «Դերասանական արվեստ» մասնագիտություններ:

– Իր անցած ճանապարհին քոլեջը երախտավորներ է ունեցել, ովքեր ժողովրդական, լարային, փողային, մեներգեցողության և այլ բաժիններ են հիմնադրել, իրենց նվիրվածությամբ նպաստել դրանց կայացմանը: Ներկայացրեք, խնդրեմ, նրանցից ամենաարժանավորներին:

– Սկզբնական շրջանում դասավանդել են կոնսերվատորիայի շրջանավարտներն ու ասպիրանտները, ովքեր հետագայում դարձել են հանրապետության կրթության և մշակույթի երևելի դեմքեր՝ վաստակավոր դասատու Էլեոնորա Կարապետյան, Սամվել Ալումյան, Հենրիկ Սմբատյան, Կարինե Քարամյան, Սվետլանա Դաղյան, Գրետա Ղազարյան, Արամ Կարապետյան, Սերգեյ Սարաջյան, Էռա Խաչատրյան, Աշոտ Ղափլանյան, Արծրուն Գրիգորյան, Արա Բոգդանյան, Գրիգոր Դանիելյան (Դանիել Երաժիշտ), Ռուբեն Սարյան, Սուրեն Շահսուվարյան, Յուրի Դավթյան, Ռուբեն Ալթունյան, Մելիք Մավիսակալյան, Դավիթ Սաքոյան, Կարինե Բաբայան, Սուրեն Շախիջանյան, Գառնիկ Խաչատրյան, Վարդիթեր Գասպարյան և ուրիշներ:

Հետագայում նրանց փոխարինելու են եկել բարձրագույն

կրթություն ստացած կապանցի մասնագետները՝ Սվետլանա Կոստանյան, Վերժինե Ալեքսանյան, Վերա Բաղդասարյան, Ջուլիետա Հարությունյան, Անահիտ և Կարինե Հարությունյաններ, Հայկ Ավագյան, Միխայել Կարապետյան, Ֆելիքս Հայրապետյան, Ալբերտ Առաքելյան, Էդուարդ Եղիազարով, Աիդա Աբգարյան, Զախար Թագակչյան, Ալեքսեյ Բալայան, Էդիկ Դավթյան, Մարիցա Պետրոսյան, Անահիտ Բաղդասարյան, որոնց հետագայում միացան բուհերում ուսանած մեր այլ շրջանավարտները: Ուրույն տեղն են ունեցել հանրակրթական բաժնի դասատուներ Մարգարիտա Գրիգորյանը, Նինա Մարտիրոսյանը, Լիդա Առաքելյանը, Սվետլանա Հովհաննիսյանը, Լաուրա Մարտիրոսյանը, Նեկտար Գրիգորյանը, Սեյրան Գրիգորյանը, Մելսիկ Ղուկասյանը, Սուսաննա Մարտիրոսյանը և ուրիշներ: Անգնահատելի են նրանց ավանդն ու նվիրումը կրթօջախի կայացման գործում:

Նորաբաց գեղարվեստի մասնագիտությունների կայացման հիմնաքարերն են դրել գեղանկարիչներ Ռոբերտ Կամոյանը, Վանյա Գրիգորյանը, Ռոմեն Ղոնյանը, Հրանտ Դանիելյանը, որոնց փոխարինեցին կապանցի երիտասարդները:

«Պարարվեստ» մասնագիտության դասավանդումն իրականացնում են Թամարա Ստեփանյանը և Մելանյա Մարտիրոսյանը, իսկ «Դերասանական արվեստ» մասնագիտության հիմնադիր դասախոսը Նատալյա Բաղդասարյանն է:

Ուսումնական գործընթացին աջակցությունն են ցուցաբերել Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսորները:

Քոլեջի գործունեությունը միշտ էլ գտնվել է կոնսերվատորիայի ղեկավարության տեսադաշտում: Այսօր էլ շարունակվում է այդ ավանդույթը՝ ի դեմս Ծովինար Մովսիսյանի, Արմեն Բաբախանյանի, Նոննա Ոսկանյանի, Տիգրան Հեքեքյանի, Արսեն Գրիգորյանի, Սերգեյ Քեչեկի, Անժելա Աթաբեկյանի, Ծովինար Հովհաննիսյանի և այլոց:

– Արդեն 60-ամյա կենսագրություն ունեցող քոլեջում քանի՞ մասնագիտություն է դասավանդվում, և որո՞նք են դրանցից ամենապահանջվածները:

– Քոլեջի գործունեության առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է, որը կազմակերպվում է հիմնական և միջնակարգ կրթության հիմքերով:

Քոլեջում ուսուցումն իրականացվում է առկա ձևով, միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 11 մասնագիտության գծով:

Քոլեջում իրականացվում է նաև ուսուցում նախամասնագիտական ուսուցման վճարովի խմբերում և նախապատրաստական դասարանում՝ «Դաշնամուր», «Լարային գործիքներ», «Փողային գործիքներ», «Ժողովրդական գործիքներ», «Երգեցողություն», «Պարարվեստ», «Դերասանական արվեստ» և «Գեղանկարչություն» մասնագիտությունների գծով, ինչպես նաև կարճաժամկետ վճարովի դասընթաց՝ «Համակարգիչների շահագործում» մասնագիտությամբ:

Այսօր քոլեջում ուսուցանվող ամենապահանջված մասնագիտությունները «Դիզայն» և «Պարարվեստ» մասնագիտություններն են, որով էլ պայմանավորված են ընդունելության արդյունքները:

Ապագայում նպատակ ունենք լիցենզավորել և կրթություն իրականացնել արդի շուկայական պահանջներին համապատասխան՝ մի շարք մասնագիտությունների գծով:

Քոլեջն աշխատանքներ է տանում տարբեր ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ արտերկրի՝ կապերի ամրապնդման ու համագործակցության ուղղությամբ: 2025 թվականին՝ Այունիքում Իրանի Իսլամական Հանրապետության հյուպատոսարանի աջակցությամբ, հնարավոր դարձավ քոլեջի մի խումբ ուսանողների և դասախոսների այցելությունն Իրանի Իսլամական Հանրապետության Թավրիզի արվեստի համալսարան, որի արդյունքում հնարավոր կլինի համագործակցությունը երկու ուսումնական հաստատության միջև: Նման նախաձեռնությունների միջոցով արվեստի քոլեջն առավել ճանաչելի կդառնա նաև հանրապետության սահմաններից դուրս:

– Որքանո՞վ է քոլեջը համալրված երաժիշտ-մանկավարժներով: Կա՞ մասնագիտություն, որի դասավանդողի կարիքն ունեք: Քոլեջն ավարտած շրջանավարտը բարձրագույն կրթություն ստանալով՝ վերադառնու՞մ է քոլեջ:

– Քոլեջի ռազմավարական նպատակներից են կադրային ներուժի զարգացումը և դասախոսական կազմի համալրումը բարձր որակներ ունեցող մասնագետներով: Այսօր քոլեջում դասավանդում են բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ 43 դասախոս, ուսումնական գործընթացին մասնակցում են 6 նվագակցող և 3 իլյուստրատոր: Դասախոսները և նվագակցողներն ունեն մասնագիտական զարգացմանն անհրաժեշտ պատրաստվածություն և կարողություններ: Քոլեջը բոլոր հնարավորություններն օգտագործում է դասախոսների, նվագակցողների և մյուս աշխատակիցների մասնագիտական զարգացման համար:

Դասախոսներն ակտիվորեն մասնակցում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող տարաբնույթ վերապատրաստումների: Կարևորում եմ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող բարեփոխումները, այդ թվում՝ պարտադիր ատեստավորումը, որը, միանշանակ, միտված է դասախոսների մասնագիտական աճին ու առաջընթացին:

2025 թ. քոլեջն ընդգրկվել է պետական հավատարմագրման գործընթացում: Հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից քոլեջի դասախոսական կազմն արժանացել է բարձր գնահատականի:

Ցավով պետք է նշեմ, որ կիթառի, ակորդեոնի և մի շարք այլ գործիքների գծով չենք կարողանում իրականացնել կրթական գործընթաց՝ համապատասխան մասնագետներ չլինելու պատճառով:

Քոլեջն ունի դասախոսական կազմի սերնդափոխության խնդիր, որը պետք է իրականացվի համաչափորեն: Ցավոք, շրջանավարտներից շատերը համապատասխան բուհերում ուսումն ավարտելուց հետո չեն վերադառնում հարազատ կրթօջախ, որը բացասաբար է անդրադառնում նշված խնդրի լուծմանը: Նրանց վերադարձը կլուծեր ոչ միայն քոլեջի, այլև մարզի մասնագիտական դպրոցների կադրերի սերնդափոխության խնդիրը: Այս հարցի լուծման ճանապարհները գտնելու նպատակով եղել են քննարկումներ Կապանի համայնքապետարանի և մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատակազմի հետ:

– Կապանի արվեստի պետական քոլեջի ուսանողները մասնակցո՞ւմ են փառատոների, մրցույթների... Վերջին երեք տարում քոլեջի Վ. Ստամբոլցյանի անվան երգեհոնային դահլիճում անց է կացվել Կապանի միջազգային երաժշտական փառատոնը, որը նոր երանգ է հաղորդել Ձեր ղեկավարած կրթօջախի կյանքին: Այդ մասին...

– Քոլեջի ուսանողները հաջողությամբ մասնակցություն են ունենում միջազգային և հանրապետական մրցույթների, փառատոների, գիտաժողովների, ցուցահանդեսների, սպորտլանդիաների, մրցաշարերի, էքսպոների՝ արժանանալով դափնեկրի կոչման, մրցանակների, պատվոգրերի և շնորհակալագրերի: Նրանք ակտիվ մասնակցություն են ունենում նաև մարզային և քաղաքային բազմաթիվ ու բազմաբնույթ միջոցառումների:

Քոլեջի ուսանողական թատրոնի ուժերով բեմադրվում են ներկայացումներ, որոնց հանդիսատեսը Կապանի հանրակրթական դպրոցների աշակերտներն ու նախակրթարանների սաներն են:

Վերջին հինգ տարվա ընթացքում քոլեջի 30 շրջանավարտ ուսումը շարունակել են Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում, գեղարվեստի ակադեմիայում, թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում:

Կապանի միջազգային երաժշտական փառատոնը, որ անց է կացվել երեք անգամ, նոր երանգ է հաղորդել ոչ միայն քոլե-

ջի, այլև Կապանի, Սյունիքի և հանրապետության մշակութային կյանքին: Փառատոնի շրջանակում իրականացվող համերգներին ու վարպետաց դասերին ներկա են գտնվել քոլեջի ուսանողներն ու դասախոսները՝ բարձրացնելով կատարողական և մանկավարժական վարպետությունը: Ի դեպ, քոլեջի ուսանողները ևս մասնակցություն են ունեցել փառատոնի շրջանակում տեղի ունեցող համերգներին:

– Կապանի երեք երաժշտական դպրոցի և արվեստի մանկական դպրոցի պարագայում քոլեջի դաշնամուրային բաժինը, որը նախկինում ամենաշատ դիմորդներն էր ունենում, այսօր դիմորդ չի ունենում, այն դեպքում, երբ այդ մասնագիտության գծով տարիներ առաջ մրցակցություն էր լինում, և «Դաշնամուր» մասնագիտությունն առավել պահանջված ու հարգված էր: Գուցե նշածս դպրոցները պատշաճ աշխատանք չե՞ն տանում քոլեջի համար դիմորդներ պատրաստելու խնդրում:

– Դիմորդների խնդիրը ցավոտներից մեկն է քոլեջի համար: Այդ խնդիրը վերաբերում է ոչ միայն «Դաշնամուր» մասնագիտությանը, այլև այլ մասնագիտությունների, առավելապես «Երաժշտության տեսություն», «Էստրադային արվեստ», «Քանդակագործություն» մասնագիտություններին, որոնց գծով դիմորդներ չեն լինում: Չնայած այն հանգամանքին, որ վերջին երեք տարվա ընթացքում նկատվում է դիմորդների թվի աճ, խնդիրը մնում է կարևորագույններից մեկը քոլեջի համար: Այդ հարցում, իրոք, կարևորում եմ մասնագիտական դպրոցների կողմից տարվելիք աշխատանքները: Պետք է նշեմ Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանի հետևողական աշխատանքը և շահագրգռվածությունը նշված հարցի լուծման գործում: Հարցի լուծմանը նպաստում է նաև համագործակցությունը համայնքի հանրակրթական դպրոցների տնօրենների հետ, որի արդյունքում իրականացվում են փոխադարձ այցելություններ՝ շնորհաշատ պատանիների և աղջիկների մասնագիտական կողմնորոշման նպատակով:

– Որքանով տեղյակ ենք՝ քոլեջում ժողգործիքների որոշ տեսակների տեղերը թափուր են մնում, մինչդեռ ժողգործիքների անսամբլը չի կարելի պատկերացնել առանց ազգային նվագարանների: Ո՞րն է ելքը՝ դուրս գալու ստեղծված իրավիճակից:

– Ցանկացած նվագախումբ լիարժեք է հնչում, երբ առկա են բոլոր գործիքները: Այն վերաբերում է թե ժողովրդական, թե փողային, թե կամերային, թե սիմֆոնիկ նվագախմբերին: Քոլեջի նվագախմբերում այդ խնդիրն առկա է: Ցավոք, ի տարբերություն վաղ անցյալի, երբ քոլեջում ուսուցանվում էին բավականին երաժշտական գործիքներ (հոբոյ, ֆագոտ, տրոմբոն, տուբա, քսիլոֆոն, քամանչա, ուդ, սանթուր, ալտ և այլն), այսօր՝ մասնագետներ չլինելու պատճառով, հնարավոր չէ իրականացնել նշված գործիքների կրթական գործընթացը: Դա խնդիր է նաև մասնագիտական դպրոցների համար: Հարցի լուծումը պետք է լինի համակարգային և խորքային՝ հրավիրված կամ վերապատրաստված մասնագետների միջոցով:

– Քոլեջի այցեքարտերից և հպարտություններից մեկը երգեհոնն է: Կարծես թե լուծվեց նրա վերանորոգման երկար չարչրկված խնդիրը: Բայց նաև նկատենք, որ երգեհոնն օգտագործվում է այն ժամանակ, երբ դրսից երգեհոնահար է գալիս: Կապանը նախկինում երգեհոնահարներ ուներ՝ Ամիդա Աբգարյան, Աննա Առուստամյան և ուրիշներ:

– Հիրավի, Կապանի այցեքարտերից մեկը երգեհոնն է:

Երգեհոնը միշտ գտնվել է Կապանի արվեստի պետական քոլեջի (նախկին երաժշտական ուսումնարանի) տնօրենների ուշադրության և հոգածության կենտրոնում: Արցախյան ազատամարտի տարիներին քոլեջի համերգային մեծ դահլիճը ենթարկվել էր հրետակոծության, որի հետևանքով տուժել էր նաև երգեհոնը:

Տեղադրման օրվանից ի վեր այն չէր վերանորոգվել: Երգեհոնի վերանորոգումն իրականացվեց Կապանի միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում՝ երգեհոնահար Գարրի Եփրիկյանի կողմից:

Շուրջ 49 տարի կապանյան արվեստասեր հասարակության առաջ հանդես են եկել աշխարհահռչակ երգեհոնահարներ, ինչպես նաև հայ երգեհոնահարներ: ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանը սիրով իր գիտելիքներն է փոխանցել կապանցի շնորհալի երաժիշտ-կատարողներին՝ Անահիտ Աբրահամյան, Ամիդա Աբգարյան, Մերի Մովսիսյան, Մարինա Նահապետյան, Աննա Առուստամյան, ովքեր իրենց կատարումներով կապանցի հանդիսատեսին անմասն չեն թողել և այսօր էլ չեն թողնում երգեհոնային երաժշտություն ունկնդրելուց:

Գնահատելով ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր, երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանի ներդրումն ու ավանդը՝ Կապան քաղաքում երգեհոնի տեղադրման և երգեհոնային երաժշտության տարածման գործում, քոլեջի կառավարման խորհուրդը 2014 թ. որոշեց երգեհոնային դահլիճը կոչել Վահագն Պարույրի Ստամբոլցյանի անունով:

Հոկտեմբերի 14-ին քոլեջի Վ. Ստամբոլցյանի անվան երգեհոնային դահլիճում, Վ. Ստամբոլցյանի անվան երգեհոնային երաժշտության 3-րդ միջազգային փառատոնի շրջանակում, կայացավ երգեհոնային երաժշտության համերգ, որի ընթացքում երևանցի երգեհոնահարների հետ մեկտեղ, ելույթ ունեցավ նաև Կապանի արվեստի մանկական դպրոցի տնօրեն, Վ. Ստամբոլցյանի սան Մարինա Նահապետյանը:

– Ավանդական հարցերից մեկը պետք է տամ. երիտասարդն ավարտեց քոլեջը, կարողանո՞ւմ է նա իր տեղը գտնել կյանքում: Արդյո՞ք քոլեջը որոշակի ուսումնասիրություն կատարում է իր շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ:

– Քոլեջում գործում է կարիերայի ուղղորդման կենտրոն, որը տրամադրում է տեղեկատվություն, խորհրդատվություն, ուղղորդման աշխատանքներ, նպաստում աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, ապահովում ուսանողների, շրջանավարտների և գործատուների կապը, կազմակերպում բազմաբնույթ միջոցառումներ:

Կարիերայի կենտրոնն իրականացնում է ուսումնասիրություններ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ՝ համագործակցելով գործատուների և միասնական սոցիալական ծառայության Կապանի տարածքային կենտրոնի հետ: Վեր են հանվում աշխատաշուկայի արդի պահանջները, գործատուների առաջարկները, որոնց հիման վրա էլ կառուցվում է քոլեջի ռազմավարությունը:

Կարևոր է նաև հանգամանքը, որ գործատուների ներկայացուցիչները մասնակցում են պետական որակավորման քննություններին և անձամբ ծանոթանում ուսանողների գործնական և տեսական բարձր պատրաստվածությանը:

Պետք է նշեմ, որ քոլեջի շրջանավարտները, ինչպես նաև ուսանողները, ընդգրկված են Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի թատերախմբում, Կապանի համայնքապետարանի մշակույթի կենտրոնի փողային, ժողովրդական գործիքների նվագախմբերում, կանանց երգչախմբում, պարախմբերում, զորամասերի փողային նվագախմբերում, դասավանդում են մարզի մասնագիտական ուսումնական հաստատություններում և մշակույթի կենտրոններում, զբաղվում մասնագիտական անհատական ձեռնարկատիրությամբ և այլն:

– Պարոն Խաչատրյան, ոչ մի հաստատություն հիմնախնդիրների պակաս չունի. ո՞րն է Ձեր քոլեջի առջև ծառացած ամենասուր խնդիրը՝ հրատապ լուծում պահանջող:

– Ցանկացած ուսումնական հաստատություն, այդ թվում և Կապանի արվեստի պետական քոլեջը, ունի հիմնախնդիրներ: Առաջնային եմ համարում քոլեջի ուսումնական մասնաշենքի կապիտալ վերանորոգման խնդիրը, որն ուսումնական գործընթացի

արդյունավետության բարձրացման գրավականներից է:

– **Խնդիր է նաև սովորողների՝ երաժշտական գործիքներով ապահովվածությունը: Որքանով տեղյակ ենք, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն աջակցել է այս խնդրում, կա՞ն քոլեջին այլ հովանավորողներ, եթե այո, ապա մի քանի խոսք նրանց մասին:**

– Ուրախությամբ պետք է նշեմ, որ քոլեջն այսօր ապահովված է երաժշտական գործիքներով: Վերջին ձեռքբերումը՝ Կապանի միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում, քոլեջին նվիրաբերված «Steinway» մակնիշի ռոյալն էր: Գործիքները խնամքով պահպանվում են, վերանորոգվում, հնարավորինս իրականացվում է դաշնամուրների և ռոյալների լարումն ու վերանորոգումը:

Միայն վերջին չորս տարվա ընթացքում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հատկացված դրամաշնորհի միջոցով, իրականացվել է քոլեջի ջեռուցման համակարգի կառուցումը, ձեռք է բերվել շուրջ ինը միլիոն դրամի գույք՝ երաժշտական գործիքներ, համակարգիչներ, ձայնային սարքավորումներ, գեղարվեստի մասնագիտությունների համար ուսումնադիդակտիկ նյութեր և պարագաներ, պարասրահի համար հայելիներ, ցուցասրահի համար մետաղյա խողովակներ, գույք (աթոռներ, սեղաններ, նստարաններ, պահարաններ) և մարզագույք: Քոլեջի միջոցներով փոխվել են մի շարք կաբինետների պատուհանները:

Սյունիքի մարզպետի աշխատակազմի աջակցության շնորհիվ իրականացվել է Վահագն Ստամբոլցյանի անվան երեգեհոնային դահլիճի ճեմասրահի և ցուցասրահի վերանորոգումը: Մարզպետի աշխատակազմի աջակցության շնորհիվ քոլեջի ուսանողները կարողացել են այցելել Տաթև, Զորաց քարեր և Նորավանք, Մ. Սարյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Թումանյանի, Ս. Փարաջանովի տուն-թանգարաններ, Մատենադարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, դիտել Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետը, մասնակցել «Արտ մյուզիկ» մրցույթի մրցանակաբաշխությանը՝ ստանալով նվաճած մրցանակները:

Կապանի համայնքապետարանի հովանավորությամբ իրականացվել են քոլեջի առաջին հարկի ճեմասրահի կենտրոնական հատվածի վերանորոգման աշխատանքները, փոխվել լուսամփոփները և այլն: Տեղադրվել են խողովակներ՝ գեղարվեստի մասնագիտությունների ուսանողների աշխատանքները ցուցադրելու համար:

Քոլեջի գործունեությունը և հիմնախնդիրները գտնվում են ՀՀ Աժ պատգամավոր Դավիթ Դանիելյանի անմիջական ուշադրության կենտրոնում: Նրա աջակցությամբ իրականացվել է երգեհոնային դահլիճի ճեմասրահում տեղադրված Ս. Մանգասարյանի «Կոմիտաս» և Ա. Ծովյանի «Սայաթ-Նովա» կտավների ռեստավրացիան ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ում: 60-ամյակին նվիրված նյութերը ցուցադրելու համար ձեռք ենք բերել ստենդներ և այլն:

Կապանի միջազգային երաժշտական փառատոնի հիմնադիր, թավջութակահար Սևակ Ավանեսյանի նախաձեռնությամբ վերանորոգվել է ուսումնական մասնաշենքի առաջին հարկում տեղակայված մարզադահլիճը (որպես փառատոնի մասնակիցների համար փորձասրահ):

Քոլեջի գրադարանը համալրվել է մասնագիտական և մեթոդական գրականությամբ: Դասագրքերի շրջանառման հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում ձեռք ենք բերել հանրակրթական առարկաների համար նախատեսված դասագրքեր:

Քոլեջին աջակցություն են ցուցաբերում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն ու Կապանի լեռնահարստացման կոմբինատը: ԶՊՄԿ-ի հովանավորությամբ քոլեջի ուսանող Միհրան Գրիգորյանը մասնակցել է Լիտվայում անցկացված միջազգային մրցույթին՝ արժանանալով երկրորդ մրցանակի:

«Սյունյաց երկրի»՝ քոլեջին նվիրված հոբելյանական համարի հովանավորը ևս Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է:

Կապանի լեռնահարստացման կոմբինատի տնօրենության հետ պայմանավորվածության արդյունքում պլանավորվել են իրականացնել քոլեջի մի շարք լսարանների և սանհանգույցների վերանորոգման աշխատանքները:

– Ի՞նչ կուզենայինք հաղորդել ընթերցողին՝ որպես զրույցի ավարտ: Կամ ի՞նչ կարևոր հարց դուրս մնաց մեր զրույցից:

– Կցանկանայի շնորհավորել բոլորիս՝ Կապանի արվեստի պետական քոլեջի 60-ամյակի կապակցությամբ և վստահորեն ասել, որ քոլեջը կշարունակի մնայուն տեղ ունենալ Կապանի, Սյունիքի մարզի և Հայաստանի Հանրապետության կրթամշակութային կյանքում՝ պատվով կրելով իր խաչը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Պատմական ակնարկ

Կապանի երաժշտական ուսումնարանը (այժմ արվեստի պետական քոլեջ) 60-ամյա ընթացքի մեջ հայտնի է եղել արհեստավարժ մանկավարժական կադրերով: Այդ մասին «Սյունյաց երկրին» մանրամասներ ներկայացրեց կրթօջախի առաջին շրջանավարտներից, նախկին տնօրեն Լիաննա Հակոբյանը (1999-2015թթ.): Նա նախ հիշեց, որ ուսումնարանը գործունեության սկզբնական շրջանում տեղակայված էր քաղաքի նախկին հյուրանոցի երկհարկանի շենքում: Կառույցը փայտաշեն էր, առաջին հարկում տեղավորված էր երաժշտական ուսումնարանը, երկրորդ հարկում քաղաքի երաժշտական դպրոցն էր: 1965 թվականին Ղափանում բացվել է Ռոմանոս Մելիքյանի անվան ուսումնարանի մասնաճյուղը, որը մեկ տարի հետո վերակազմավորվել է երաժշտական ուսումնարանի:

Նորաստեղծ ուսումնական հաստատության հիմնադիր տնօրենը թավջութակահար Արտյոմ Մարջանյանն էր, ով Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիան ավարտելուց հետո որոշեց աշխատել Ղափանում: Այդ ընտրության մեջ դեր խաղաց նրա հայրը՝ ՀՀ գիտությունների ակադեմիայի նախագահի տեղակալ Ալեքսանդր Մարջանյանը՝ Կապանի երաժշտական ուսումնարանի հիմնադրման նախաձեռնողներից մեկը: Լիաննա Հակոբյանը հիշում է, որ որպես երաժշտական գործիք, թավջութակը տարածում չուներ մեզանում: Արտյոմ Մարջանյանն ամսական երկու-երեք համերգ էր տալիս, որի արդյունքում թավջութակն այնքան սիրելի դարձավ, որ հաջորդ ուսումնական տարում Կապանի երաժշտական դպրոցի թավջութակի դասարան ընդունվեց 13 երեխա: Նրանցից ոմանք հետագայում ուսումը շարունակեցին երաժշտական ուսումնարանում:

Ղափանի երաժշտական ուսումնարանում հիմնադրման օրվանից գործել է վեց բաժին՝ դաշնամուրային, լարային, փողային, հարվածային, ժողովրդական գործիքների, մեներգեցողության, երգչախմբավարության: Ինչպես տեղեկացնում է Լիաննա Հակոբյանը, կրթօջախում սկզբնապես դասավանդել են Երևանի կոնսերվատորիայի շրջանավարտները և ասպիրանտները, որոնց համար հաճելի էր լեռնագործների քաղաքում ապրելն ու աշխատելը: Դրան նպաստում էր կանոնավոր գործող Երևան – Կապան – Երևան

երկաթուղային կապը: Երեկոյան ժամը 20-ին Կապանում կարելի էր գնացք նստել և հաջորդ առավոտյան ժամը 8-9-ին արդեն Երևանում էիր, նույնը՝ հակառակ ուղղությամբ: Փաստորեն աշխատանքային օրը չէիր կորցնում:

Առաջիններից մեկը ուսումնարանում դասավանդելու եկավ Սերգեյ Սարաջյանը (հետագայում կոնսերվատորիայի ռեկտոր) կնոջ՝ Էռա Խաչատրյանի հետ, ինչպես նաև Հենրիկ Սմբատյանը (հետագայում կոնսերվատորիայի երկարամյա պրոռեկտոր): Հաջորդաբար դասավանդելու եկան Սամվել Ալումյանը, Սվետլանա Դաղյանը, Արա Բոգդանյանը, Կարդիթեր Գասպարյանը, Ռուբեն Սարյանը (Մարտիրոս Սարյանի թոռը), Գրիգոր Դանիելյանը (Դանիել Երաժիշտ), Կարինե Քարամյանը, Էլեոնորա Կարապետյանը, Ռուբեն Ալթունյանը և ուրիշներ:

Հետագայում նրանց փոխարինեցին Կապանի երաժշտական ուսումնարանում սովորած և բարձրագույն երաժշտական կրթություն ստացած (հիմնականում Երևանի պետական կոնսերվատորիա) մասնագետները՝ Սվետլանա Կոստանյան, Վերժինե Ալեքսանյան, Միխայել Կարապետյան, Էդիկ Դավթյան, Հայկ Ավագյան, Ալբերտ Առաքելյան, Ալեքսեյ Բալայան, Անահիտ Բաղդասարյան և ուրիշներ:

Լիաննա Հակոբյանը նաև ներկայացրեց այն ժամանակվա ուսումնարանում սովորողների աշխարհագրությունը, որը բավականին ընդգրկուն էր. բացի Սյունիքի քաղաքներից՝ Գորիս, Մեղրի, Ագարակ, Սիսիան, Քաջարան, ուսումնարանում սովորելու էին գալիս Դնեպրոպետրովսկից,

Հյուսիսային Կովկասի քաղաքներից և հատկապես Բաքվից: Կրթօջախը բավականին համբավ ուներ և գոյության առաջին տարիներին լուծեց, նախևառաջ, Սյունիքի երաժշտական դպրոցները միջին մասնագիտական երաժշտական կրթությամբ կադրերով համալրելու խնդիրը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Երգեհոնի կապանյան գրանցումը

1976-ի մարտին Կապանի երաժշտական ուսումնարանում առաջին անգամ հնչեց երգեհոնային երաժշտություն: Երկար դեգերումներից հետո մշտական գրանցում էր ստացել գերմանական «E.F.Walcher» ֆիրմայի արտադրության գործիքը:

Ինչպես ամեն մի նախաձեռնություն, Կապանում երգեհոնի տեղադրումն նախապես ունի իր նախապատմությունը: Պետերբուրգի Մարիինյան թատրոնը նախատեսել էր ազատվել իր երգեհոնից, որը ձեռք էր բերվել Առաջին համաշխարհայինի տարիներին: Սովորաբար դուրս գրված գործիքի արժեքի գնահատումը (երգեհոնը գնահատվեց չորս հազար ռուբլի) իրականացնում էր հատուկ հանձնաժողովը, որի անդամն էր Վահագն Ստամբոլցյանը: Ճանաչված երգեհոնահարի, հանրապետության գիտությունների ակադեմիայի հանձնաժողովի նախագահի տեղակալ Ալեքսանդր Մարջանյանի, մշակույթի նախարար Կ. Ուդումյանի և ՀԿԿ Ղափանի շրջկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Ռաֆայել Մինասյանի ջանքերի շնորհիվ՝ երգեհոնը կապանյան գրանցում ստացավ:

Այդ հազվագյուտ գործիքը Ղափան տեղափոխելուց հետո պարզվեց, որ նրա մեխանիկական հատվածը շարքից դուրս է եկել, թեպետ ամենակարևորը՝ գլանները պահպանվել էին: Գործիքի վերականգնումն իրականացրին «Rieger Kloss» ֆիրմայի չեխ մասնագետները, որի համար վճարվեց 56 հազար ռուբլի: Այսպես Հայաստանում հայտնվեց գերմանական արտադրության առաջին երգեհոնը, որը դարձավ ոչ միայն Ղափանի, այլև հանրապետության հպարտությունը:

Պահպանվել է Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Լ. Ռոյզմանի նամակը, որում նա բարձր է գնահատել գործիքի որակական հատկանիշները. **«Զարմանալի և հաճելի տպավորություն թողեց ինձ վրա Ղափանի երգեհոնը, փառք ու պատիվ ձեզ, որ գաղափար առաջացավ այդ «ավերակը» վերակենդանացնելու, և թող կեցցեն չեխերը՝ դա նրանց լավագույն հիբրիդն է: Ղափանի դահլիճը և նրա ակուստիկան հիանալի են»:** Ակներև է, որ պրոֆեսորը հնչեցրել է Կապանի երգեհոնը, որտեղից էլ նրա հիացական գնահատականը:

Կապանում կայացած երգեհոնային անդրանիկ համերգին ելույթ ունեցան երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանը, Դավիթ Գիլանյանը, ուսումնարանի կամերային նվագախումբը՝ Գրիգոր Դանիելյանի ղեկավարությամբ, կրթօջախի դասատուներ և սովորողներ: Համերգային ծրագրում հնչեցին Բախի խորալները, հատվածներ «Մաթևոսի չարչարանքները» խորալից, «Տոկատտա և ֆուգա. ռե մինոր», Շուլցի ստեղծագործությունները, հայկական հոգևոր երաժշտություն: Հաջորդ օրը կայացավ Վահագն Ստամբոլցյանի մենահամերգը:

Նոր գործիքի ի հայտ գալով Կապանում սկզբնավորվեց ու ամրապնդվեց երգեհոնային երեկոների անցկացման ավանդույթը, բազմիցս երաժշտական ուսումնարանի դահլիճում հանդես էին եկել Վ. Ստամբոլցյանը, Ա. Ադամյանը, Կ. Աղաբեկյանը, արտասահմանցի երաժիշտներ, մասնավորապես, երգեհոնահար Ջեյմս Դալտոնը (Մեծ Բրիտանիա), Իմրիխ Շաբոյը (Չեխոսլովակիա), Ռոբերտ Ռոժեն (Ֆրանսիա), Գալինա Կոզլովան և Գարի Գրոդբերգը (Ռուսաստան):

Ուսանողական համերգներից հիշատակելի են Երևանի պետական կոնսերվատորիայի երկու ստեղծագործական գործուղումները՝ 1986-ին Կ. Աղաբեկյանի երգեհոնային դասարանի և 1997-ին Վահագն Ստամբոլցյանի դասարանի սովորողների ելույթները, վերջիններիս թվում էր այն ժամանակվա ասպիրանտ Մերի Մովսիսյանը: Վահագն Ստամբոլցյանի մոտ դասընթացներ են անցել երաժշտական ուսումնարանի շրջանավարտներ Մարինա Նահապետյանը և Աննա Առուստամյանը:

2006-2011 թթ. Կապանի արվեստի պետական քոլեջի այն ժամանակվա տնօրեն Լիանա Հակոբյանի նախաձեռնությամբ կայացան համերգաշարեր՝ նվիրված Կապանում երգեհոնի տեղադրման 30 և 35-րդ տարեդարձներին, որոնց շրջանակում համերգային ելույթներով հանդես եկան հանրապետության լավագույն երգեհոնահարները, ինչպես նաև կապանցի կատարողներ:

Երգեհոնը միշտ գտնվել է Կապանի արվեստի պետական քոլեջի (նախկին երաժշտական ուսումնարանի) տնօրենների ուշադրության և հոգածության կենտրոնում: Արցախյան ազատամարտի օրերին քոլեջի համերգային մեծ դահլիճը ենթարկվել է հրետակոծության, որից մեծապես վնասվել է նաև երգեհոնը: Թեև այսօր էլ համերգների ժամանակ հնարավոր է հնչեցնել գործիքը, այն վերանորոգման հույժ կարիք ունի: 2009 թ. քոլեջի տնօրենության նախաձեռնությամբ Կապան են հրավիրվել երգեհոնը քաղաքում տեղադրած չեխական «Rieger Kloss» ֆիրմայի մասնագետները և կազմվել վերանորոգման համապատասխան հաշիվ ու ներկայացրել ՀՀ

կառավարությանը: Երկու տարի անց քոլեջում հյուրընկալվել են «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր, պրոֆեսոր Տիգրան Հեքեքյանը և երգեհոնի շվեյցարացի վարպետ Ֆերդինանդ Շտեմերը, ով պատրաստակամություն է հայտնել վերանորոգել երգեհոնը՝ համերգային մեծ դահլիճի նորոգումից հետո:

Իրականում երգեհոնը նորոգվեց 2024 թվականին Կապանի միջազգային երաժշտական փառատոնի նախաձեռնող և հիմնադիր Սևակ Ավանեսյանի նախաձեռնությամբ: Երգեհոնահարներ Գարրի Եփրիկյանի և Եգոր Ռուդոմյոտովի՝ ամիսներ տևած աշխատանքի շնորհիվ երգեհոնը երկրորդ կյանք ստացավ: Երգեհոնի վերանորոգման հովանավորներն էին Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և VIWA-ն:

2025թ. հոկտեմբերի 14-ին արվեստի պետական քոլեջի երգեհոնային դահլիճում կայացավ Վահագն Ստամբոլցյանի անվան երգեհոնային երաժշտության երրորդ միջազգային փառատոնը: Համերգային ծրագրով հանդես եկան Վահագն Ստամբոլցյանի սաներ Մարինա Նահապետյանը, Հարություն Թագվորյանը, Թերեզա Ոսկանյանը, Արմեն Աղաջանյանը:

Հնչեցին Բուքստեհուդեի, Բախի, Կոմիտասի, Ալ. Հարությունյանի ստեղծագործություններից: Փառատոնն ավանդական է դարձել:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԷՋԵՐ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Արցախյան ազատամարտ... Տարիներ, որոնց ընթացքում տուժեց նաև Այունիքի մարզը, մասնավորապես Կապան քաղաքը:

1992 թ. նոյեմբերին քոլեջի ուսումնական մասնաշենքը և երգեհոնային դահլիճը ևս ենթարկվեցին հրետակոծության, որից վնասվեց նաև երգեհոնը:

Արցախյան գոյամարտի տարիներին, Կապանի նոր կազմավորված զորամասի հրամանատար, փոխգնդապետ Միքայել Գրիգորյանի առաջարկությամբ, ուսումնարանի /քոլեջի/ մանկավարժ տղամարդիկ՝ Ֆելիքս Հայրապետյանի ղեկավարությամբ, անդամագրվեցին զինվորական նվագախմբին: Հենց այդ ծանր ու

Քոլեջի մասնակցությունն Արցախյան ազատամարտերին

դժվարին ժամանակահատվածում էլ՝ կապանցիների անկոտրում կամքն ու ոգին բարձրացնելու նպատակով, 1993 թ. փետրվարի 23-ին քոլեջի դասախոսների ուժերով, հրետակոծությունից տուժած դահլիճում, կազմակերպվեց համերգ: Մայիսի 9-ին կայացած զինվորական շքերթում փողային նվագախմբի մասնակցությունը ոգևորիչ արձագանք գտավ՝ գոտեպնդելով ազգաբնակչությանն ու զինվորականներին: Արցախյան առաջին ազատամարտի տարիներին զինվորական նվագախմբում իրենց ծառայությունն իրականացնող քոլեջի դասախոսները՝ զինվորական նվագախմբի գործունեությունից զատ, ապահովում էին հերթապահությունը զորամասում, ելույթներ ունենում սահմանամերձ բնակավայրերի բնակիչների, զինվորների և սպաների առաջ՝ հասնելով մինչև Հորադիզ: ՀՀ Զինված ուժերում ծառայության համար քոլեջի մի շարք դասախոսներ, այդ թվում և ներկայիս տնօրեն Աշոտ Խաչատրյանը, պարգևատրվել են «97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադ»-ի 15-ամյակի հուշամեդալով:

Ուսումնարանի նախկին ուսանող Վարուժան Արտոյի Մանուկյանն Արցախյան ազատամարտի առաջին օրերից անդամագրվեց Կապանի «Երկրապահ» կամավորականների ջոկատին՝ որպես հրետանավոր:

Ավագ լեյտենանտ, առանձին մոտոհրաձգային դիվիզիոնի հրամանատար Վարուժան Մանուկյանը



/Գյուրզա/ մասնակցել է Արծվանիկի, Կարմրաքարի, Գորիսի, Սրաշենի, Ճակատենի, Ծավի, Հորադիզի պաշտպանությանը: Մասնակցել է գրեթե բոլոր վճռական մարտերին և անմահացել 1994 թ. ապրիլի 22-ին՝ Հորադիզում: 1997 թ. Վարուժան Մանուկյանին հետմահու շնորհվել է «Արիության մեդալ»:

Կապանի արվեստի պետական քոլեջի դասախոսական և ուսանողական կազմն անմասն չմնացին Արցախյան հետագա պատերազմներին՝ իրենց մասնակցությունը ցուցաբերելով թե մարտական գործողություններին, թե թիկունքի աշխատանքներին:

Քոլեջի զինղեկ Դավիթ Քարամյանը 2016 թ. Քաշունիքում իր մասնակցությունն ունեցավ քառօրյա պատերազմին:

2020թ. սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան ադրբեջանական ուժերը հարձակման անցան արցախաադրբեջանական սահմանի ողջ երկայնքով: Պատերազմի առաջին իսկ օրվանից պարզ դարձավ, որ այս հարձակումն աննախադեպ էր թե սահմանների ընդգրկվածությամբ, թե ռազմական տեխնիկայի և թե ուժերի ներգրավվածությամբ:

Ուսանողներ Ալեն Սևակի Աղաջյուլյանը, Միեր Աշոտի Ամիրջանյանը, Միքայել Կարենի Առաքելյանը, Գոռ Սաղաթելի Դանիելյանը, Մարատ Վարազդատի Մարտիրոսյանը, Ալեն Միերի Սարգսյանը և Բորիս Ստանիսլավի Մովսիսյանը 44-օրյա պատերազմի ընթացքում մարտնչեցին ԼՂ Մարտունիի, Վարանդայի, Քարվաճառի շրջաններում: Ալեն Աղաջյուլյանը ծանր վիրավորվելուց հետո ապաքինվեց, վերականգնվելով քոլեջում՝ պատվով ավարտեց ուսումնառությունը՝ հանդիսատեսին հիացնելով իր կատարումներով:

Հայ ժողովուրդն Արցախյան ազատամարտերում կարողացավ ցույց տալ միասնականություն, հավաքական ուժով ցույց տվեց իր հողում ապրելու և արարելու ուժն ու կարողությունը: Այդ ամենին անուրանալի է քոլեջի դասախոսների և ուսանողների մասնակցությունը:

Զանգեզուրում անհրաժեշտ է ունենալ երաժշտական ուսումնարան (նամակ խմբագրությանը)

Կուլտուրական մեծ նվաճումների է հասել Զանգեզուրը: Ստեղծվել են մի շարք միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ, ծրագրվում է Ղափանում հիմնել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիլիալ, գործում են թատրոն, կուլտուրայի մի քանի պալատներ, բազմաթիվ գրադարաններ և շատ այլ օջախներ:

ՀԵՆՐԻԿ ՍՄԲԱՏՅԱՆ
Երևանի կոնսերվատորիայի ջութակի դասատու

Հայֆիլհարմոնիան նախատեսել է այս տարի Ղափանում և Քաջարանում անցկացնել աբոնեմենտային համերգաշարեր, որոնցով սկիզբ կդրվի սիստեմատիկ երաժշտական կյանքին ռեսպուբլիկայի լեռնարդյունաբերության խոշորագույն կենտրոններում: Ծրագրվող այդ համերգներում հանդես կգան ֆիլհարմոնիայի համերգային կոլեկտիվները, ինչպես նաև ռեսպուբլիկայի լավագույն արտիստական ուժերը: Սկսելով այդ շնորհակալ գործը, ֆիլհարմոնիան հետագայում աշխատանքներ է ծավալելու նաև Ագարակում, Գորիսում, Դաստակերտում, Սիսիանում՝ ընդգրկելով Զանգեզուրի ամբողջ արդյունաբերական շրջանը:

Ներկայումս Ղափանում, Քաջարանում, Գորիսում, Սիսիանում և Մեղրիում գործում են հինգ երաժշտական դպրոց: Ղափանի 7-ամյա դպրոցը, որը հիմնադրվել է 1952 թ., տվել է բազմաթիվ շրջանավարտներ, որոնցից շատերը հաջողությամբ շարունակում են իրենց ուսումը Մոսկվայում, Երևանում և այլ քաղաքներում: Դպրոցի ավելի քան 220 աշակերտ սովորում է դաշնամուրի, ջութակի, թավջութակի, փողային և ժողովրդական նվագարանների դասարաններում: Գործում են երգեցիկ խումբը, քանոնահարների և ջութակահարների անսամբլները:

Նշանակալի աշխատանք են կատարում նաև Գորիսի և Մեղրու երաժշտական դպրոցները: Սակայն, այդ բոլորով հանդերձ, դպրոցների աշխատանքները, ինչպես պետք է, չեն ծավալվում և դրան առաջին հերթին խանգարում է երաժշտական կադրերի պակասը: Օրինակ, արդյունաբերական այնպիսի կարևորագույն վայրերից մեկում, ինչպիսին է Քաջարանը, երաժշտական դպրոցը, մասնագետների բացակայության պատճառով, փաստորեն այս տարի դեռ չի սկսել աշխատանքները: Դպրոցը, ունենալով 5-6 տարվա պատմություն, առ այսօր չի աշխատել լրիվ ծրագրով՝ տեսական առարկաների դասատուներ չունենալու պատճառով:

Կադրերի նույնպիսի սուր պակաս են զգում նաև Գորիսի, Սիսիանի, Մեղրու երաժշտական դպրոցները: Իսկ արդյունաբերական մի այլ խոշոր ձեռնարկության՝ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի երեք ավաններից և ոչ մեկում դեռ չկա երաժշտական դպրոց, և Մեղրու դպրոցի ֆիլիալ ստեղծելու հարցը չի լուծվում:

Երաժշտական կադրերի պակասը Զանգեզուրում հնարավորություն չունեն լրացնելու Երևանի, Լենինականի և Կիրովականի երաժշտական ուսումնարանները, այնպես որ Ղափանում երաժշտական ուսումնարանի ստեղծումը դարձել է օրվա հարց:

Այս ուսումնական տարում այդ անել, իհարկե, դժվար կլինի, բայց նպատակահարմար է նախապատրաստել և հաջորդ տարում բացել ուսումնարանը:

Ղափանում երաժշտական ուսումնարանի ստեղծումը նոր թափ կհաղորդի կուլտուրական կյանքի զարգացմանը Զանգեզուրում:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 9 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1964 Թ., № 238 (13276)

Ուսումնարանի և նրա դիրեկտորի մասին

Կոմպոզիտորների տանը համերգ էր տալիս Մոսկվայի կոնսերվատորիայի շրջանավարտ Արտեմ Մարջանյանը: Երիտասարդ, շնորհալի թավջութակահարի հետ երևանյան ունկնդիրների առաջին հանդիպումն էր այդ: Մի փոքրիկ ինֆորմացիա տպագրվեց այդ համերգի մասին մեր թերթում: Հիմա, երկու տարի անց, նորից հանդիպում եմ իմ հերոսին: Բարդ ծրագրում, Բեթհովենի առաջին և երրորդ սոնատների կողքին, մարդկային խորունկ վշտով համակված թավջութակը երգեց «Կռունկը» և «Ծիրանի ծառը»:

Համերգում կատարվեց նաև Ադամ Խուդոյանի սոնատը: Երիտասարդ թավջութակահարին նվագակցում է Մոսկվայի կոնսերվատորիայի շրջանավարտ Նատալիա Պոլիշչուկ-Ալումյանը:

Երբ հաճելի դիմագծերով երիտասարդը դահլիճի ծափերին հլու խոնարհվում էր, գուցե և ոչ մեկի մտքով չէր անցնում, որ նա համերգային երաժիշտ լինելուց բացի, հիմնադիր է նաև երաժշտական մի դարբնոցի:

Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիան փայլուն գնահատականներով ավարտելուց հետո որոշեց աշխատել Ղափանում:

1965 թվին Ղափանում բացվեց երաժշտական ուսումնարան, որը Երևանի Ռ. Մելիքյանի անվան ուսումնարանի ֆիլիալն էր: Երիտասարդ դիրեկտոր Արտեմ Մարջանյանը, քաղաքի երաժշտական դպրոցի մի քանի դասատուների և շրջանավարտների հետ, ծավալեց երաժշտական նոր հաստատության առաջին ուսումնական կյանքը: Նա ժամանակ գտավ իր՝ որպես երաժիշտ-կատարողի մասին ևս հոգալու: Նա Մոսկվայի կոնսերվատորիայում ընդունվեց պրոֆեսոր Մ. Ռոստրոպովիչի մոտ որպես ստաժյոր: Իսկ նոյեմբերին մասնակցեց հանրապետության երիտասարդական 2-րդ փառատոնին: Նա մրցույթից Ղափան վերադարձավ որպես փառատոնի դափնեկիր՝ ոսկե մեդալակիր: Ուսումնարանի դասատուները և

1965 թվին Ղափանում բացվեց երաժշտական ուսումնարան, որը Երևանի Ռ. Մելիքյանի անվան ուսումնարանի ֆիլիալն էր: Երիտասարդ դիրեկտոր Արտեմ Մարջանյանը, քաղաքի երաժշտական դպրոցի մի քանի դասատուների և շրջանավարտների հետ, ծավալեց երաժշտական նոր հաստատության առաջին ուսումնական կյանքը:



ուսանողները համերգներ տվեցին Զանգեզուրի քաղաքներում ու խոշոր գյուղերում՝ Ղափանում, Քաջարանում, Գորիսում, Տաթևում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում: Ապրիլին նրանք հանդես եկան իրենց խնամակալի՝ Ռ. Մելիքյանի անվան ուսումնարանում և ապա ռադիոյով: Իսկ իր անձնական՝ երաժիշտ-կատարողի կյանքի տարեգրությունում ուսումնարանի երիտասարդ դիրեկտորը նշեց՝ 1966 թվի հունվարի 20-ին մենահամերգ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դահլիճում, համամիութենական մրցույթի



ծրագրով: Կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմը գտավ, որ նա կարող է մասնակցել մոսկովյան միջազգային մրցույթին: Նույն թվի փետրվարին մոսկովյան մրցույթի մասնակիցը վերադարձավ Ղափան:

Իր երկրորդ ուսումնական տարին Ղափանի երաժշտական ուսումնարանն սկսեց ինքնուրույն: Դրանով Հայաստանում երաժշտական ուսումնարանների թիվը հասավ չորսի: Արդեն այն ժամանակ ուսումնարանի 1-ին և 2-րդ կուրսերում սովորում էին 61 հոգի, 40 հոգի սովորում էր միայն նախապատրաստականում: Ուսանողներից շատերը հանրակրթական դպրոցներում ունեին իրենց աշակերտները: Այսպիսով շուրջ 300 հոգի ապրում և աշխատում էր Ղափանի երաժշտական ուսումնարանի ռիթմով: Դասատուական կազմը համալրվեց նոր, կարող ուժերով՝ հանձինս Կարինե Քարամյանի (դաշնակահար), Գրետա Ղազարյանի (խմբավար): Արմեն Բալասանյանը հիմնեց ուսումնարանի փողային բաժինը և իր հայրենի քաղաքում ստեղծեց առաջին փողային էստրադային նվագախումբը: Ռոմեո Մարտիրոսյանը բացեց կլարնետի դասարանը: Այսպիսով, փայտյա և պղնձյա փողային գործիքների ամբողջ ընտանիքն իր ձայնը տարածեց ուսումնարանի կամարների տակ: Ղափան աշխատելու եկավ նաև Երևանի կոնսերվատորիայի ավագ դասախոս Սամվել Ալումյանը (դաշնակահար), որը ասպիրանտուրան ավարտել էր Մոսկվայում: Աշխատելու եկավ նաև Մոսկվայի կոնսերվատորիայի շրջանավարտ, ջութակահար Արմեն Մարջանյանը:

Այդ տարի առաջին անգամ Ղափանի երաժշտական ուսումնարանը Երևանում տվեց իր հաշվետու համերգը: Հաշվետու համերգին մասնակցեցին ուսումնարանի բոլոր բաժինները՝ դաշնակահարները, ջութակահարները և փողայինները, վերջում՝ լարային նվագախումբը՝ Արմեն Մարջանյանի ղեկավարությամբ: Երկու տարվա աշխատանքի արդյունքը բարձր գնահատվեց մասնագետների կողմից: Ղափանի երաժշտական ուսումնարանի համբավը ձգողական ուժ է արդեն Ջերմուկի, Գորիսի, Սիսիանի, Մեղրու, Ստեփանավանի և՛ նույնիսկ Բաքվի երաժշտական դպրոցների շրջանավարտների համար, ինչպես նաև երիտասարդ խանդավառ մասնագետների համար: Կոմիտասի անվան կոնսերվատորիայի այս տարվա շրջանավարտներ, շնորհալի երաժիշտներ Սվետլանա Դաղյանը, Լևոն Աբրահամյանը և էլի ուրիշներ իրենց անդրանիկ աշխատանքային տարին կսկսեն Ղափանի ուսումնարանում:

Ուսումնարանի հինգ բաժիններին կավելանա ևս երեքը՝ տեսության, երգեցողության և ստեղծագործական: Առայժմ դրանց ստեղծման համար զգացվում է շենքի և կադրերի պակաս: Եվ ահա ուսումնարանի հայրենասեր, խանդավառ երիտասարդներին օգնության եկավ «Հայհիդրոնախագիծ» ինստիտուտի երիտասարդությունը: Նրանք հասարակական կարգով նախագծեցին Ղափանի նոր երաժշտական ուսումնարանի շենքը. հարմարավետ ու գեղեցիկ է այն՝ 450 տեղանոց իր համերգասրահով, ձայնադարանով, հերմետիկ սենյակներով և այլն:

Նորից հիշում եմ Արտեմի մենահամերգը: Ցանկալի կլիներ, որ նա հաճախակի համերգային ծրագրերով հանդես գար ոչ միայն Հայաստանի, այլև միության բեմահարթակներում:

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հ.Գ. ՀՈԴՎԱԾԻ ԱՂԲՅՈՒՐԸ ՀՀԱՁՈՂՎԵՑ ԳՏՆԵԼ

ԵՐԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԵՐԳՆԵՐ

Արարատ Պետրոսյան – շվիահար, Երևանի պետական կոնսերվատորիայի ժողովրդական գործիքների դասարանի դասախոս, Ա. Մերանգուլյանի անվան ժողգործիքների անսամբլի շվիահար, Լոս-Անջելեսի «Արաքս» երաժշտանոցի և «Սրինգ» ժողովրդական համույթի հիմնադիր

Արմեն Ղուկասյան - ֆլեյտահար, Անդրկովկասյան մրցույթի դափնեկիր /1-ին մրցանակ/, ԵՊԿ դոցենտ

Անուշ Ներսիսյան – Մ. Մուսորգսկու և Հուգո Վոլֆի անվան մրցույթների դափնեկիր, Զալցբուրգի և Քլագենֆուրտի օպերային թատրոնների մեներգչուհի

Մկրտիչ Գրիգորյան - Ուրալի օպերետտի թատրոնի գլխավոր դիրիժոր

Անուշ Ալեքսանյան – երգահան, խմբավար

Աստղիկ Մնեցունց – Նարեկացի ժողովրդական նվագարանների, Գյուրջիևի անվան ժողովրդական նվագարանների համույթի, գուսանական և ժողովրդական երգի պետական անսամբլի, Օշական կվարտետի, Արսեն Պետրոսյան քառյակի քանոնահարուհի

Հրազդան Սարգսյան - ԵՊԿ դոցենտ, Երևանի սիմֆոնիկ նվագախմբի և «Երևան» փողային նվագախմբի կլարնետահար

Սասուն Առաքելյան – ֆլեյտահար, Լենինգրադի կամերային ֆիլհարմոնիայի մենակատար, Ք. Պուշկինի Եկատերինյան պալատի մենակատար: Մենահամերգներով հանդես է եկել ՌԴ-ում, Եվրոպայում, Բելառուսում

Արմինե Պետրոսյան – Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի թավջութակահարուհի

ԵՐԱՇԽԱՐՀԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Նունե Հարությունյան – դաշնակահարուհի, մենահամերգներով հանդես է եկել Մոսկվայում

Սեդա Սարդարյան – ջութակահարուհի, Մոսկվայի մարզի Ստուպինյան ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմայստեր և ջութակահարների անսամբլի ղեկավար

Մարինե Պետրոսյան – երգչուհի, ԵՊԿ-ում Հովհաննես Բաղալյանի ասիստենտ, «Սայաթ-Նովա» հանրապետական մրցույթի դափնեկիր /1-ին մրցանակ/: Ապրում և ստեղծագործում է ԱՄՆ-ում

Էրիկ Ավանեսյան - գեղանկարիչ, հագուստի մոդելավորող, մասնակցել է Միլանում կայացած մի շարք ցուցադրությունների

Միեր Ամիրջանյան – «Եղեգան փող» միջազգային մրցույթի Մեծ մրցանակի դափնեկիր

Վահան Մանուկյան – կոմպոզիտոր / Ալ. Հարությունյանի դասարան/

Արթուր Ասրյան – դաշնակահար, Առնո Բաբաջանյանի անվան մրցույթի դափնեկիր /1985թ., 1-ին մրցանակ/, գործիքավորող

Վարդան Հովհաննիսյան – Լեհաստանի Լազիսկա-Գուրնե քաղաքի փողային նվագախմբի փոխդիրիժոր և կլարնետահար

Սամվել Հայրապետյան – ՀՀ ռադիոյի և հեռուստատեսության էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի և Արմեն-Հակոբ սիմֆոնիկ նվագախմբի շեփորահար

Ճանաչված դասախոսներ, ովքեր մայրաքաղաքից եկել ու մասնակցել են քոլեջի կայացման ընթացքին

Տիգրան Հեքեքյան *- Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, խմբավար*

Արմինե Գրիգորյան *Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնակահար*

Արսեն Գրիգորյան *- Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի փողային գործիքների բաժնի դասախոս, կլարնետահար*

Սերգեյ Քեչեկ *- ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, դաշնակահար*

Իվան Վարդանյան *- Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, խմբավար*



Տիգրան Տողրամաջյան *– ՀՀ մշակութային կրթության աջակցության հիմնադրամի մեթոդիստ, մանկավարժ, ջութակահար*

Անժելա Աթաբեկյան *- ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, քանոնահարուհի*

Դանիել Երաժիշտը և Կապանի երաժշտական ուսումնարանը

Երաժշտագետ, դիրիժոր, հասարակական գործիչ, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր գործիչ Դանիել Երաժիշտի (Գրիգոր Դանիելյան) կենսագրության մեջ առնչություններ կան Կապանի երաժշտական ուսումնարանի (այժմ՝ արվեստի պետական քոլեջ) հետ: Առաջին առնչությունը եղել է 1969 թվականին: Մաեստրոն հիշում է. **«Սովորում էի կոնսերվատորիայում, քանի որ այդ ժամանակ ուսումնարանում դասավանդողներ քիչ կային, շաբաթը մեկ անգամ գնացքով գալիս էի Կապան, դա լինում էր ուրբաթ երեկոյան, շաբաթ-կիրակի դասավանդում էի և հետ վերադառնում Երևան»:**

Ավելի տևական ժամանակով Դանիել Երաժիշտը Կապանի երաժշտական ուսումնարանում դասավանդել է 1975-1977 թվականներին: 1975-ին նշվում էր Յոհան Սեբաստիան Բախի 290-րդ տարեդարձը, և ուսումնարանի դասատուներով և սովորողներով միասնական համերգ են տվել: Հայ երաժշտական իրականության մեջ Դանիել Երաժիշտը հայտնի է նաև իր հիմնադրած հոգևոր երաժշտության անսամբլներով: Եվ ահա դրանից առաջինը՝ «Շարականը», որպես ինքնագործ խումբ, ստեղծվել է Կապանի երաժշտական ուսումնարանում: Նրա ղեկավարությամբ գործում էին երգչախումբ (բաղկացած ուսումնարանի սովորողներից) և նվագախումբ, որի կորիզը կազմում էին Դանիելյան ընտանիքը՝ Ժասմեն (դաշնամուր, երգեհոն), Միշա (թավջութակ), Աշոտ (կոնտրաբաս) Դանիելյանները, ինչպես նաև ուսումնարանի շնորհաշատ սովորողները՝ ֆլեյտահարներ Արմեն Ղուկասյան, Սասուն Առաքելյան, Միխայիլ Կարապետյան (ջութակահար), Դավիթ Գրիգորյան (կլարնետահար), Ֆելիքս Սիդակով (ֆագոտ) Էդուարդ Եղիազարով (ջութակահար), Աիդա Աբգարյանը (դաշնամուր) և ուրիշներ:

«Շարականի» համերգները երբեմն հարստացնում էին Երևանից ժամանած արտիստները, բայց հիմնական կազմը մնում էր նույնը՝ կապանցի դասատուներ և սովորողներ: Անսամբլն ուներ ուրույն դիմագիծ, որը դրսևորվում էր ոչ միայն հարուստ երկացանկով (Կոմիտաս, Եկմալյան, Մենդելսոն, Բրամս, Հայնրիխ Շյուտց և այլք), այլև ստեղծագործությունների ինքնատիպ մեկնաբանության մեջ: Մամուլը սիրով էր արձագանքում «Շարականի» ելույթներին («Պղնձի համար» շրջանային թերթը, «Սովետական արվեստ» ամսագիրը և այլն): Դրանից զատ Կապանում պրեմիերաներ էլ էր լինում, օրինակ, Բախի «Չարչարանքներ՝ ըստ Հովհաննու» պասիոնը հատվածաբար կատարվել է Կապանում՝ հանրապետության ճանաչված երաժիշտների ներկայությամբ:

Դանիել Երաժիշտը նշում է նաև մի հանգամանք՝ ասելով, որ Կապանում իր գտնվելու ժամանակ

ստեղծագործական մթնոլորտ էր, այստեղ ստեղծել է իր լավագույն երգերի մշակումները՝ տաղերի, շարականների և այլն: Այն ժամանակվա քաղխորհրդի գործկոմի նախագահի պատվոգրին է արժանացել. մշակել է 18-րդ դարի բանաստեղծ և երգահան Պետրոս Ղափանցու տաղը՝ «Առավոտյան քաղցր ու անուշ հովեր» տողով սկսվող, որ առաջին անգամ կատարել է Կապանում: Պատվոգրում նշվում էր՝ տրվում է Գրիգոր Ղափանցուն, ինչը շատ էր դուր եկել նրան, և այդպես էր ստորագրում իր հեղինակած որոշ հոդվածներ: Ի դեպ, նա երաժշտագիտությանը վերաբերող հրապարակումներով հաճախակի էր հանդես գալիս պարբերական մամուլում:

1977-79 թթ., երբ ղեկավարել է Լենինականի պետական կամերային նվագախումբը, հյուրախաղերով հանդես է եկել Կապանում (որպես գեղարվեստական ղեկավար և դիրիժոր), Կապան հրավիրելով նաև համաշխարհային ճանաչում ունեցող դաշնակահար Ալեքսեյ Լյուբիմովին: Կապանում երեք կոնցերտ են նվագել: **«Երբ Կապանից արդեն գնացել էի, չէի կարող շատ հեռանալ, իմ սիրտը Խուստուփում էր: Հաճախ վերադառնում էի իմ սիրելի քաղաք և տարբեր կազմերով համերգներ էի տալիս՝ որպես հյուր: Կապանից հեռացա, քանի որ պիտի ուսումս շարունակեի՝ որպես դիրիժոր, հետո ուսանեցի Մոսկվայի Չայկովսկու անվան կոնսերվատորիայի ասպիրանտուրայում»,-** վերհիշում է մաեստրոն:

Իր գործունեությունը շարունակելով Երևանում՝ մաեստրոն ոչ միայն հաջողությամբ կիրառեց Կապանում ձեռք բերած հմտությունը, այլև շարունակեց համագործակցել կապանցի երաժիշտներ՝ Արմեն Ղուկասյանի, Սամվել Ավանեսյանի հետ:

Դանիել Երաժիշտի մի այցը հարազատ քաղաք ևս հիշարժան է. Կապան է այցելել երաժշտական ուսումնարանի հիմնադրման 40-ամյակին նվիրված հանդիսությանը մասնակցելու՝ հայհամերգի «Շարական» համույթի հետ: 2005 թ. հոկտեմբերի 16-ին Գարեգին Նժդեհի հուշահամալիրում «Շարականը» առաջին անգամ կատարել է նրա հեղինակած «Գարեգին Նժդեհ» երգը: Նրա այդ ստեղծագործությունը մկրտություն ստացավ իր պաշտելի Խուստուփի հայցքի ներքո...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Գառնիկ Խաչատրյան

Վաղ դրսևորվեց Գառնիկ Խաչատրյանի հակումը երաժշտության հանդեպ: Տասնչորս տարեկանում արդեն երաժիշտ-կատարող էր: Այն տարիներին, երբ դեռևս չուներ երաժշտական կրթություն և չէր տիրապետում նոտագրությանը, նվագում էր թառ, քամանչա, շվի, դուդուկ, զուռնա, կլարնետ, ակորդեոն, քանոն, ուդ, բամբիռ, ջութակ, թավջութակ, շեփոր, տրոմբոն և բոլոր գործիքներին գերազանց էր տիրապետում: Եվ միայն 1957-1960-ին ուսանել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում:

1962 թվականից Կապանի N1 երաժշտական դպրոցում դասավանդում էր սոլֆեջիո և հայ ժողովրդական նվագարաններ, գործուն մասնակցություն է ունեցել այդ կրթօջախի և Ղափանի երաժշտական ուսումնարանի ժողգործիքների բաժինների հիմնադրմանը: Այդ կրթօջախներում և թիվ 27 գիշերօթիկ-սանատոր դպրոցում ուսուցանում էր ժողգործիքներ, դասավանդում տեսական առարկաներ, վարում երգի-պարի համույթներ, երգչախմբեր: Տաղանդավոր երգահանը հանդես է եկել որպես առաջին խմբավարը և պարուսույցը Ղափանում: Նա կազմակերպեց առաջին բազմաձայն երգչախումբը, երգի-պարի անսամբլը՝ 120 մասնակցով: Բազմաթիվ անգամ նրա սաները և ղեկավարած խմբերը մասնակցել են հանրապետական հաշվետու համերգների, երաժշտական օլիմպիադաների, տուն դարձել մրցանակներով: Ինքը՝ որպես երաժիշտ կատարող, ելույթներ է ունեցել Մոսկվայում, Ռիգայում, Կիևում, Անդրկովկասի մի շարք քաղաքներում, դարձել դափնեկիր, մեդալակիր:

Գառնիկ Խաչատրյանը հայտնի է որպես երգահան: Ստեղծագործություններ է գրել դաշնամուրի, ջութակի, թավջութակի համար: 1965-ին «Ծաղկի՛ր, իմ Հայաստան» փառատոնում Գառնիկ Խաչատրյանի թառի կոնցերտն արժանացել է ոսկե մեդալի: Գրել է «Սյունիք» սյուիտը, որ կատարել է Էմմա Ծատուրյանի ղեկավարած անսամբլը: Երգահանի «Իմ Կապան» երգն առաջին անգամ հնչել է 1978 թվականին՝ Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: Նրա ստեղծագործությունների և կատարումների մի շարք մտել է Հայաստանի ռադիոյի ոսկե ֆոնդը:

Գառնիկ Խաչատրյանի դիմանկարը թերի կլինի, եթե չնշվի հասարակության մեջ նրա ակտիվ կենսադիրքի մասին: Գառնիկ Խաչատրյանին ճանաչողների համար, թերևս, ամենատպավորիչը հայրենասիրությունն էր, որով նա առանձնանում էր նույնիսկ այն տարիներին, երբ չէր թույլատրվում կամ շատերը չէին համարձակվում խոսել հայրենասիրության և հայասիրության մասին: Իսկ Արցախյան շարժման տարիների առաջին իսկ օրերից շարժման ակունքներում էր, մարդկանց հորդորում էր պայքարել մեր ժողովրդի այդ հատվածի արդար պահանջատիրության համար: Գառնիկ Խաչատրյանը հայրենի քաղաքի հասարակական կյանքի ակտիվ մասնակից էր, ընտրվել է քաղխորհրդի պատգամավոր, պարգևատրվել էր «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով, բազմաթիվ պատվոգրերով: Նրա վաստակը գնահատվեց նաև մեր օրերում. Կապան քաղաքի օրվա կապակցությամբ նրան հետմահու շնորհվել է «Կապան» ոսկե հուշամեդալ:

Հանրապետության վաստակավոր արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը Գառնիկ Խաչատրյանի մասին ասել է. **«Նրա մեջ կար աշխարհն ընկալելու, աշխարհը սիրելու, աշխարհին նվիրվելու մի տեսակ, զուտ գառնիկխաչատրյանական տեսակ, նա ժողովրդական գործիքների վիրտուոզ կատարող էր, և այդպիսի նվագող մարդը, այդպիսի ընդունակություններ ունեցող անձնավորությունը չէր կարող չստեղծագործել: Նա շատ արագ ստեղծագործում էր ժողովրդական մի մեղեդի և իսկույն որևէ գործիքով նվագում: Կարելի է ասել, որ ստեղծագործելը նրա համար դյուրին մի բան էր...»:**

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Գառնիկ Խաչատրյանը հայտնի է որպես երգահան: Ստեղծագործություններ է գրել դաշնամուրի, ջութակի, թավջութակի համար: 1965-ին «Ծաղկի՛ր, իմ Հայաստան» փառատոնում Գառնիկ Խաչատրյանի թառի կոնցերտն արժանացել է ոսկե մեդալի: Գրել է «Սյունիք» սյուիտը, որ կատարել է Էմմա Ծատուրյանի ղեկավարած անսամբլը:

Արարատ Պետրոսյան

Կապանի երաժշտական ուսումնարանում է ուսանել հայ երաժշտարվեստի երախտավոր, փողային նվագարանների հանրաճանաչ վարպետ կատարող, սրնգահար Արարատ Պետրոսյանը: Կապանա տան ծնունդ է, նրա երաժշտության նախակրթության հիմնաքարը դրել է հայրը՝ Սյունիքում հայտնի դուդուկահար Ալբերտ Պետրոսյանը: Մանկուց ականջալուր լինելով նրա նվագին, խորապես տոգորվելով հայկական ժողովրդական երգի հմայքով, իր ցանկությամբ հանրակրթական դպրոցի հետ զուգահեռ ավարտում է նաև Ղափանի թիվ 1 երաժշտական դպրոցը: Կանխորոշելով իր ապագա երաժիշտ դառնալը, Արարատ Պետրոսյանը ուսումը շարունակում է տեղի երաժշտական ուսումնարանի փողային բաժնում, որպես կլառնետահար հմտանում հայտնի մանկավարժ-երաժիշտ Գառնիկ Խաչատրյանի դասարանում: Այնուհետև՝ 1983 թվականին, ավարտելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (դասախոս՝ Խաչիկ Խաչատրյան), նշանակում է ստանում, դասավանդելու կոնսերվատորիայի ժողովրդական նվագարանների բաժնում, որպես փողային գործիքների դասատու (շվի, սրինգ, թավ շվի, դուդուկ, բլուլ, զուռնա):



Մանկավարժության հետ զուգահեռ, զբաղված լինելով ստեղծագործական և կատարողական գործունեությամբ, Արարատ Պետրոսյանը դեռ ուսանողության տարիներին հրավիրվում է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլ, որպես շվիահար:

Արարատ Պետրոսյանը ստեղծագործ մտքի թռիչք ուներ և նուրբ ճաշակ, տիրապետում էր արևելյան երաժշտարվեստի ճյուղերից մեկի՝ մուղամաթի գաղտնիքներին, ինչի շնորհիվ հրավիրվում էր միջազգային ֆոլկլորագիտական ժողովների և փայլում իր կատարողական վարպետությամբ (1983 թ. Սամարղանդ, 1990 թ. Դուշանբե, 1991 թ. Բեռլին):

1993 թվականին Արարատ Պետրոսյանը մեկնում է ԱՄՆ, իսկ 1997 թ. Լոս Անջելեսի Իրանահայ միության հովանավորությամբ հիմնում է «Արաքս» երաժշտանոցը, որտեղ ուսուցանվում էր բացառապես հայկական ժողովրդական երաժշտություն: Այնուհետև երաժշտանոցին կից Արարատը ստեղծում է նաև «Սրինգ» ժողովրդական համույթը, որը ճանաչում ուներ Լոս Անջելեսի հայության մեջ: Ուսուցչությունը չի խանգարում նրան՝ զուգահեռաբար համերգներով հանդես գալու ԱՄՆ-ում և նաև Ավստրալիայում:

Շնորհաշատ երաժիշտն ամենուր՝ թե Հայաստանում, թե ԱՄՆ-ում ապրելու տարիներին շրջապատված է եղել հայկական ժողովրդական երաժշտարվեստի մեծերի ուշադրությամբ և արժանացել նրանց բարձր գնահատանքին:

«ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀՈՎԵՐ» ՀԱՆԴԵՍԻՑ

Արարատ Պետրոսյանը ստեղծագործ մտքի թռիչք ուներ և նուրբ ճաշակ, տիրապետում էր արևելյան երաժշտարվեստի ճյուղերից մեկի՝ մուղամաթի գաղտնիքներին, ինչի շնորհիվ հրավիրվում էր միջազգային ֆոլկլորագիտական ժողովների և փայլում իր կատարողական վարպետությամբ (1983 թ. Սամարղանդ, 1990 թ. Դուշանբե, 1991 թ. Բեռլին):

ՄԱՍՈՒԼԸ՝ ՔՈԼԵՋԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անահիտ Բաղդասարյան

Կապանի երաժշտական ուսումնարանի և Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գեղագիտության ֆակուլտետի երաժշտության բաժնի շրջանավարտ:

«Ժողովրդական գործիքներ» մասնագիտության դասախոս էր:

Կապանի պետական երաժշտական ուսումնարանում աշխատել է 1974 թվականից: Քանոնահարուհի էր, տվել է բազմաթիվ շրջանավարտներ, ովքեր աշխատում են Սյունիքի մարզի երաժշտական ու արվեստի դպրոցներում, մի մասն էլ շարունակել է ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում և աշխատում է մայրաքաղաքի տարբեր երաժշտախմբերում:

Ուսումնարանում աշխատելու տարիներին հիմնադրել է ժողովրդական գործիքների անսամբլ: Ստեղծել է քանոնահարների անսամբլ՝ ժողովրդական գործիքային արվեստի և ժողովրդական երգարվեստի զուգակցումով, որ բարձր գնահատականի է արժանացել Խաչատուր Ավետիսյանի, Էմմա Ծատուրյանի, կոնսերվատորիայի պրոֆեսորներ Անժելա Աթաբեկյանի, Վիլլի Մոկացյանի և այլոց կողմից:

Անահիտ Բաղդասարյանի սաները և ղեկավարած կոլեկտիվները ելույթներով հանդես են եկել ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս՝ Ռուսաստան (Մոսկվա), Ուկրաինա, Չեխոսլովակիա և այլն՝ արժանանալով դափնեկրի կոչման:

Սվետլանա Կոստանյան

Կապանի երաժշտական ուսումնարանում որպես դաշնամուրի դասախոս աշխատում էր հիմնադրման օրվանից: Աշխատանքային գործունեության ընթացքում տվել է մոտ հինը տասնյակ շրջանավարտ, որոնց մի մասն ուսումը շարունակել է Երևանի, Բաքվի, Սվերդլովսկի բարձրագույն ուսումնական հաստատություններում, մի մասն էլ մանկավարժական գործունեություն է ծավալել Սյունիքի մարզի և հանրապետության մյուս բնակավայրերի երաժշտական և արվեստի դպրոցներում: Նրա սաները մասնակցել են հանրապետական մրցույթների, արժանացել մրցանակների և պատվոգրերի:

Սվետլանա Կոստանյանը երկար տարիներ ղեկավարել է ուսումնարանի դաշնամուրի բաժինը: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց՝ հանդես է եկել կատարողական գործունեությամբ:

1977-ին մասնակցել է հանրապետական կոնֆերանսի, բաց դասով հանդես եկել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ «Երաժշտական կրթության հիմնախնդիրները միջնակարգ ուսումնական հաստատություններում» թեմայով և կրթության նախարարության կողմից արժանացել հատուկ պատվոգրի:

Սվետլանա Նահապետյան

Ծնվել է Կապան քաղաքում, ավարտել թիվ 3 միջնակարգ դպրոցը: Նորաբաց երաժշտական դպրոցի առաջին շրջանավարտներից է, աշխատել է որպես կոնցերտմայստեր: Միջնակարգ դպրոցը, Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանն ավարտելուց հետո, ուղեգրով աշխատանքի է անցել Կապանի թիվ 1 երաժշտական դպրոցում, որպես դաշնամուրի դասատու, աշխատանքը շարունակել Երևանի Ա. Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոցում: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը: Աշխատանքը շարունակել է հարազատ կրթօջախում՝ համատեղելով նաև ուսումնարանում որպես փոխտնօրեն ուսումնական գծով, աշխատել մեծ նվիրվածությամբ:

Ս. Նահապետյանն սաների հետ բազմիցս մասնակցել է մրցույթ-փառատոնների, համատեղ համերգներով հանդես եկել Մոսկվայում, Տալլինում: Սաներից ոմանք ուսումը շարունակել են կոնսերվատորիայում, ասպիրանտուրայում, ոմանք էլ աշխատել են իր հետ, հպարտացել իրենց ուսուցչի վաստակով և նվիրվածությամբ:

Հ.Գ. Անահիտ Բաղդասարյանի, Սվետլանա Կոստանյանի, Սվետլանա Նահապետյանի, Ռուզաննա Ավանեսյանի, Վարդիթեր Գասպարյանի, Էդուարդ Եղիազարովի և Արիդա Աբգարյանի, Ֆելիքս Հայրապետյանի ու Հայկ Ավագյանի մասին հրապարակումների հիմքը՝ «Սյունյաց երկիր. մշակութային» հանդես, № 5, 30 մարտի 2022 թ.:

ՄԱՍՈՒԼԸ՝ ՔՈԼԵՁԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ռուզաննա Ավանեսյան

Երաժշտության հանդեպ հակումը Ռուզաննա Ավանեսյանի մեջ ձևավորվել է ընտանիքում, հայրը մի քանի ժողովրդական գործիք էր նվագում, երգը ևս հարգի էր ընտանիքում: Նախ ավարտել է երաժշտական դպրոցի ջութակի դասարանը, ապա գերազանց առաջադիմությամբ՝ Կապանի երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժինը: 1970 թ. տեսական առարկաներ է դասավանդել Կապանի երաժշտական դպրոցում և երաժշտական ուսումնարանում: Իսկ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ավարտելուց հետո նշանակվել է թիվ 3 նորաբաց երաժշտական դպրոցի տնօրեն:

Ընդհանուր առմամբ 23 տարի ղեկավարել է թիվ 1 և թիվ 3 երաժշտական դպրոցները մինչև 2009 թվականը: Որոշ ժամանակ աշխատել է քաղաքապետարանում, 2012 թվականից քաղաքապետարանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի տնօրենն էր:

Նրա ղեկավարած երգչախմբերը մասնակցել են հանրապետական մրցույթների, արժանացել մրցանակների: 1996 թվականին «Իմ անկախ հանրապետությունը հինգ տարեկան է» մրցույթ-փառատոնին հաղթող է ճանաչվել նրա ղեկավարած դպրոցի երգչախումբը:

Ռուզաննա Ավանեսյանը նաև ստեղծագործում է, երգեր է հեղինակում, որոնց թիվը հասնում է 60-ի: Նրա անցկացրած դասաժամերին այնպիսի մթնոլորտ էր ձևավորվում, որ վերանում էր ուսուցիչ-աշակերտ սահմանագիծը:

Վարդիթեր Գասպարյան

Ծնվել է Օրջոնիկիձե քաղաքում, 1967 թվականին Երևանի պետական կոնսերվատորիան ավարտելուց հետո տեղափոխվել է Կապան, աշխատանքի ընդունվել քաղաքի երաժշտական ուսումնարանում:

Մինչև 1989 թ. ղեկավարել է կրթօջախի խմբավարական բաժինը: Նույն ժամանակահատվածում, մշակույթի պալատում կանանց երգչախմբի գեղարվեստական ղեկավարն էր, որ ճանաչում է ունեցել հանրապետությունում: Երգչախմբավարների մի ողջ սերունդ է դաստիարակել, ովքեր այժմ էլ հաջողությամբ շարունակում են նրա գործը:

Էդուարդ Եղիազարով և Աիդա Աբգարյան

Կապանի երաժշտական ուսումնարանի լարային բաժնի կայացմանը և զարգացմանը մեծապես նպաստել է Էդուարդ Եղիազարովը: Նախնական երաժշտական կրթություն է ստացել Պյատիգորսկում. հաճախել է երաժշտական դպրոցի ջութակի դասարան: Այնուհետև սովորել է Ստավրոպոլի երաժշտական ուսումնարանում (ջութակի դասարան): Ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա: Բուհն ավարտելուց հետո երկու տարի նվագել է Կիսլովոդսկի սիմֆոնիկ նվագախմբում: Այնուհետև նրա երաժշտական գործունեությունը կապված է եղել Կապանի երաժշտական ուսումնարանի հետ, որտեղ դասավանդել է 1978-1999 թվականներին՝ որպես ջութակի դասատու:

Նույն ժամանակաշրջանում Կապանի երաժշտական ուսումնարանում դասավանդել է նրա կինը՝ դաշնակահարուհի Աիդա Աբգարյանը՝ նույնպես Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտ: Նա ուսանել է նաև Վահագն Ստամբոլցյանի երգեհոնի դասարանում, ինչի շնորհիվ 1970-1980-ական թվականներին հնչեցրել է Կապանի երգեհոնը:

ՄԱՍՈՒԼԸ՝ ՔՈԼԵՋԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆելիքս Հայրապետյան

Կապանյան երաժշտարվեստի ոլորտում կրթական-մանկավարժական կյանքում մնայուն հետք թողած մտավորականներից է Ֆելիքս Հայրապետյանը՝ պարկեշտ, ազնիվ մարդն ու իր երկրի ճշմարիտ քաղաքացին, ով իրավամբ կրում էր «Մաեստրո» պատվանունը:

Ծնվել է 1934 թ. Էջմիածնում, կադրային զինվորականի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի քաղաքում, այնուհետև ավարտել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի փողային բաժինը: Խորհրդային բանակում ծառայելուց հետո աշխատել է «Սասունցի Դավիթ» կինոթատրոնում՝ երաժիշտ: 1962-ին ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի փողային բաժինը: Այն ավարտելուց հետո 1967 թ. գործուղվել է Կապան՝ աշխատել նորաբաց երաժշտական ուսումնարանում և դասավանդել մինչև 1993 թվականը, եղել փողային բաժնի վարիչ: Ուսումնարանում աշխատելու տարիներին նրա ղեկավարած փողային նվագախումբը բազմիցս մասնակցել է հանրապետական մրցույթների՝ արժանանալով մրցանակների և պարգևների, ճանաչվել հաղթող: Համերգներով հանդես է եկել Սյունիքի քաղաքներում և Երևանում:

Ժամանակակիցները պատմում են, որ վարպետությամբ հնչեցնում էր համարյա բոլոր երաժշտական գործիքները՝ փողային թե լարային, լավ երգում էր, նաև արիաներ «Անուշ» օպերայից: Տարբեր միջոցառումների ժամանակ շեփորով մեծ հաճույքով էր հնչեցնում Առնո Բաբաջանյանի «Սերենադը»: Մտերիմները նրան «Մարդ-նվագախումբ» էին անվանում: 1993 թ. հունվարի 1-ից՝ Արցախյան պատերազմի թեժ օրերին, մաեստրոն դիմեց Կապանում տեղակայված զորամասի հրամանատարությանը՝ ղեկավարելու փողային նվագախումբը: Հայաստանի հարավարևելյան սահմանները պաշտպանող մարտիկներին միշտ այցելում էր զինվորական նվագախումբը, գոտեպնդում փողային երաժշտությամբ: Մինչև 1997 թվականը ղեկավարեց այն՝ մասնակցելով հանրապետական մրցույթների և մրցանակների արժանացել: Նրանից հետո նվագախմբի դիրիժորական փայտիկը միջնեկ որդու՝ երաժիշտ Սամվելի ձեռքին էր, ով շարունակեց հոր կիսատ թողած գործը՝ հաստատ համոզմունք ունենալով, որ զորքի մարտական ոգին կարելի է բարձրացնել նաև փողային երաժշտությամբ:

1996 թվականի սեպտեմբերի 1-ից մաեստրոն Կապանի թիվ 1 երաժշտական դպրոցում էր՝ դարձյալ իր տարերքի մեջ: Ստեղծեց փողային նվագախումբ, որ պատիվ բերեց ոչ միայն դպրոցին, այլ նաև քաղաքին: Դժվար է հիշել մի համաքաղաքային միջոցառում, որից անմասն մնար այդ փողային նվագախումբը: Մինչև իր իմաստալից կյանքի վերջը Ֆելիքս Հայրապետյանը կրթական-երաժշտական ոլորտում էր, ուներ բազում ծրագրեր, որոնք, ավաղ, անավարտ մնացին...

Հայկ Ավագյան

Ֆլեյտահար, հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր, Կապանի արվեստի պետական քոլեջի փողային բաժնի նախկին ղեկավար:

1960 թվականին Երևանից ժամանած մի խումբ երաժիշտ-մասնագետներ Կապանում հավաքագրում էին երաժշտական ձիրքով օժտված տղաների, ովքեր պիտի սովորեին Երևանի գիշերօթիկ երաժշտական դպրոցում: Ընտրյալների մեջ էր նաև տասնամյա Հայկը, ով գիշերօթիկում փայլուն սովորելուց հետո առաջարկություն է ստանում նվագելու Թբիլիսիի զինվորական նվագախմբում: Հընթացս սովորում և ավարտում է Թբիլիսիի Փալիաշվիլու անվան երաժշտական ուսումնարանը՝ ֆլեյտահարի մասնագիտությամբ: Ուսումնառության տարիներին հղկվում է նրա կատարողական արվեստը, ընդսմին մասնակցում է մի շարք հանրապետական և միջազգային մրցույթների՝ արժանանալով դափնեկրի կոչման: Հայկ Ավագյան երաժիշտ-կատարողը չէր կարող բավարարվել ուսումնարանի կրթությամբ, ուստի ընդունվում և ավարտում է (գերազանց առաջադիմությամբ) Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (պրոֆեսոր՝ Հայկ Ղասաբյանի դասարանը): Միաժամանակ դասավանդում է Կապանի երաժշտական ուսումնարանում՝ հիմնադրելով ֆլեյտայի դասարանը, որտեղ աշխատել է մինչև 2009թ.: Դաստիարակել է ֆլեյտահարների մի քանի սերունդ, ովքեր հպարտանում էին իրենց ուսուցչով, ուսուցիչն էլ՝ իրենցով: Հայկ Ավագյանը (1993-1994թթ.) ղեկավարել է Կապանի թիվ 3 երաժշտական դպրոցը՝ այս անգամ էլ դրսևորելով կազմակերպչական ձիրք՝ բարձրացնելով սաների երաժշտական-կատարողական արվեստը, նպաստելով նրանց գեղագիտական դաստիարակությանը:

Հայկ Ավագյանը Կապան քաղաքում նպաստել է գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը՝ հիմնադրելով «Վարդագույն քարեր» վոկալ-գործիքային անսամբլը: 1978-ին, երբ ղեկավարում էր «Կապան» վոկալ-գործիքային անսամբլը, համերգային շրջագայության է մեկնել Բայկալ-Ամուրյան մայրուղի, ինչի համար կոլեկտիվն արժանացել է ժողովրդականի կոչման: Երկար տարիներ ղեկավարել է Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու երգչախումբը՝ այդպիսով հոգևոր երգեցողությունը դարձնելով շատ-շատերի սեփականությունը:

Հայկ Ավագյանի կյանքում ևս մի ուշագրավ դրվագ կա. Արցախյան պատերազմի տարիներին արձագանքեց երջանկահիշատակ մաեստրո Ֆելիքս Հայրապետյանի կանչին՝ ընդգրկվելով զինվորական նվագախմբի կազմում: Ճակատագրի բերումով Հայկ Ավագյանն ապրում և ստեղծագործում էր Բելգիայում, որտեղ էլ 2020 թ. հունվարին կնքեց մահկանացուն:

ԴՐՎԱԳՆԵՐ ՔՈԼԵՋԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

Արդյունավետ ուսուցում. քոլեջը՝ այդ խնդրի լուծման ուղիով

Նվագակցության դաս, դասախոս՝ Աստղիկ Գրիգորյան

Գեղանկարչության դաս, դասախոս՝ Անի Օհանջանյան

Դասախոս՝ Անուշ Մանուչարյան

Պարի դաս, դասախոս՝ Թամարա Ստեփանյան

ՍՈՉՈՅԱՅԻՑ ԴՐԱՄԱՆԵՐ ՔՈԼԵՑԻ

Դասախոս՝ Սուրեն Գրիգորյան

Դասախոս՝ Լևոն Գևորգյան

Գրադարանում

Դասախոս՝ Արաքսյա Գալոյան

ԴՐՎԱԳՆԵՐ ՔՈԼԵՋԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

Պրակտիկաների գործընթաց և գործատուներ

ԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ /ՔՈԼԵՋԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ/

Կապանի արվեստի պետական քոլեջը գոյության ընթացքում առաջնորդվել է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Զարգացող աշխարհում կրթությունն ունի փոփոխվելու, զարգանալու հատկություն:

Կապանի արվեստի պետական քոլեջի ռազմավարական գլխավոր խնդիրը զարգացող և փոփոխվող կրթական համակարգին համահունչ քայլելն է:

Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի /ՄԿՈՒՀԱԿ/ կողմից պարբերաբար վերանայվում են պետական կրթական չափորոշիչները, որը ևս խոսում է կրթության բովանդակության անընդհատ փոփոխման ու զարգացման մասին:

Այս գործընթացի արդյունա-վետության գրավականներից են պրակտիկաների կազմակերպումը և համագործակցությունը գործատուների հետ:

Քոլեջում լուրջ աշխատանքներ են տարվում պրակտիկաների գործընթացը ամուր հիմքերի վրա դնելու ուղղությամբ: Քոլեջի ուսումնական գործընթացի անբաժանելի մաս են կազմում կատարողական, ուսումնական, մանկավարժական, դիրիժորական, արտադրական և պլեներ պրակտիկաները: Պրակտիկաների գործընթացը, համաձայն գործատուների հետ կնքված պայմանագրերի, իրականացվում են Կապանի մասնագիտական՝ երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում, մանկապատանեկան ստեղծագործական և մշակույթի կենտրոններում, Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում, թանգարաններում, արտադրամասերում, ուսումնական կենտրոններում, ինչպես նաև այունյաց գեղատեսիլ բնության գրկում և պատմամշակութային կոթողներում:

Քոլեջի գործունեությունն առանց գործատուի հետ համագործակցության անհնար է: Գործատուներն ընդգրկված են քոլեջի կառավարման խորհրդի կազմում և մասնակցում են պետական որակավորման քննություններին:

Գործատուների հետաքրքրություններն ու պահանջներն ուսումնասիրելու շնորհիվ երբեմն կարող են փոփոխության ենթարկվել մասնագիտությունները, բացվել նորերը: Ապագա մասնագետը պետք է վստահ լինի, որ իր մասնագիտությամբ աշխատանք է ունենալու հենց Կապանում:

Շրջանավարտներից շատերը կրթությունը շարունակում են բարձրագույն ուսումնական հաստատություններում, իսկ ոմանք էլ մասնագիտական գործունեություն են



ծավալում ինչպես Կապանում, այնպես էլ Սյունիքի մարզում և նրա սահմաններից դուրս:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Պարի շունչը քոլեջում

ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԿԱՊՔ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն

2010 թվականից դասախոսներ Մելանյա Մարտիրոսյանի և Թամարա Ստեփանյանի նվիրական աշխատանքի շնորհիվ Կապանի արվեստի պետական քոլեջում ներդրվեց «Պարարվեստ» մասնագիտությունը:

Մասնագիտության ուսումնական ծրագրում ընդգրկված են «Դասական պար», «Հայկական ժողովրդական պար», «Ժողբնորոշ պար» և այլ մասնագիտական մոդուլներ: Շրջանավարտներին տրվում է «Ժողովրդական պարային համույթի դերասան» որակավորումը:

2025 թվականը քոլեջի «Պարարվեստ» մասնագիտության համար հոբելյանական՝ 15-րդն էր: Այդ մասնագիտության առաջին շրջանավարտները քոլեջը տվել է 2014 թվականին, իսկ 15 տարվա ընթացքում ունեցել ենք 31 շրջանավարտ: Շրջանավարտներից ոմանք իրենց ուսումն են շարունակել և այսօր էլ շարունակում են Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում: Նրանց վերադարձը Կապան՝ կլուծի մասնագիտական կադրերի սերնդափոխության խնդիրը ոչ միայն քոլեջում, այլև մարզի մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Քոլեջի շրջանավարտներից ոմանք աշխատանքային գործունեություն են ծավալում Կապանի համայնքապետարանի մշակույթի կենտրոնի և այլ պարախմբերում, ինչպես նաև որպես պարուսույց՝ մարզի նախակրթարաններում, պարային ստուդիաներում, մշակույթի կենտրոններում:

«Պարարվեստ» մասնագիտության ուսանողներն ակտիվորեն մասնակցում են Կապանում և քոլեջում կազմակերպվող բազմաթիվ համերգների, փառատոների, միջոցառումների, ցերեկույթների, ինչպես նաև հանրապետական մրցույթների՝ արժանանալով մրցանակների և պատվոգրերի: Մասնագիտության ուսանողների մասնակցությամբ քոլեջում հնարավոր է եղել իրականացնել «Անուշ» օպերայից դրվագների, Անտուան Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը», Շառլ Պերոյի «Մոխրոտը» հեքիաթների և այլ բեմադրություններ:

ԴՐՎԱԳՆԵՐ ՔՈԼԵՋԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

Մրցույթներ, փառատոներ, գիտաժողովներ, համերգներ...

Արտ Մյուզիկ-2024թ., Ալեքս Բեգլարյան, 1-ին մրցանակ

Արտ Մյուզիկ մրցույթի մրցանակակիրները

Հաշվետու համերգ - 2023թ., Մարի Էլչյան

Քոլեջի ուսանողուհի Լիա Գրիգորյանն աշխարհահռչակ երգչուհի Լյուբով Կազարնովսկայայի հետ, Իտալիա

Հաշվետու համերգից հետո-2024թ.

ՈՒՀԱ-2025, 1-ին մրցանակ

ՈՒՀԱ-2025, 1-ին մրցանակ

ԴՐՎԱԳՆԵՐ ՔՈԼԵՋԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

Քոլեջի գեղարվեստի բաժնի սաների ստեղծագործություններից

«Ուսուցչի դիմանկար» *- «Դիզայն» մասնագիտության ուսանողուհի Մանե Համբարձումյան*

«Նատյուրմորտ» - *«Դիզայն» մասնագիտության ուսանող Կարեն Ամիրբարյան*

«Նանի» - *«Գեղանկարչություն» մասնագիտության ուսանող Արթուր Խաչատրյան*



«Վահանավանք» - *«Դիզայն» մասնագիտության շրջանավարտ Կարինե Գրիգորյան*

«Այգում» - *«Գեղանկարչություն» մասնագիտության ուսանող Հակոբ Հակոբյան*

ԴՐՎԱԳՆԵՐ ՔՈԼԵՋԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

Եռեբը՝ կրթօջախի համույթներից

Ժողգործիքների համույթը

Երկսեռ երգչախումբը

Փողային նվագախումբը

ԴՐՎԱԳՆԵՐ ՔՈԼԵՋԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

Ճանաչողական այցեր

Թավրիզի արվեստի համալսարանում- 2025թ.

Հանդիպում Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանի հետ

Արամ Խաչատրյանի արձանի մոտ

Թիվ 8 ՆՈՒՀ-ի մանուկների ճանաչողական այցը քոլեջ

Քոլեջը՝ իշխանության ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում

Մրցանակների հանձնման արարողությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում

Հանդիպում ԱԺ պատգամավոր Դավիթ Դանիելյանի հետ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի այցը քոլեջ

Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը՝ քոլեջի հաշվետու համերգին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2 «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ–ի պատկերանիշը և քոլեջին շնորհված ոսկե հուշամեդալը

3 Երգեհոնը, որ 1976 թվականին իր հանգրվանը գտավ Կապանի երաժշտական ուսումնարանում

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

4 Ծովինար Մովսիսյան

4 Կարեն Սարգսյան

5 Գևորգ Փարսյան

6 Աշոտ Խաչատրյան

7 Դավիթ Դանիելյան

7 Գրիգոր Դանիելյան (Դանիել Երաժիշտ)

8 Ժաննա Վարդանյան

9 Արթուր Դանիելյան

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
Գրանցման վկայական՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 6 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 400: Ստորագրված է տպագրության՝ 24.11.2025թ.:

9 Սյունե Ջհանգիրյան

10 Կապանի արվեստի պետական քոլեջի դասախոսական և վարչական անձնակազմը (2025 թ.)

10 Կապանի արվեստի պետական քոլեջի (նախկինում՝ Կապանի երաժշտական ուսումնարան) տնօրենները

11 Երախտավորներ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

13 Աշոտ Խաչատրյան. «Քոլեջն այսուհետ ևս կշարունակի մնայուն տեղ ունենալ հանրապետության կրթամշակութային կյանքում՝ պատվով կրելով իր խաչը»

ԷՋԵՐ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

18 Պատմական ակնարկ (Վահրամ Օրբելյան)

20 Երգեհոնի կապանյան գրանցումը (Վահրամ Օրբելյան)

22 Քոլեջի մասնակցությունն Արցախյան ազատամարտերին

23 «Զանգեզուրում անհրաժեշտ է ունենալ երաժշտական ուսումնարան» (Հենրիկ Սմբատյանի նամակը «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությանը, 9.10.1964 թ.)

24 Ուսումնարանի և նրա դիրեկտոր Արտեմ Մարջանյանի մասին

26 Նշանավոր շրջանավարտներ

28 Ճանաչված դասախոսներ, ովքեր մայրաքաղաքից եկել ու մասնակցել են քոլեջի կայացման ընթացքին

ՄԱՄՈՒԼԸ՝ ՔՈԼԵՋԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

29 Դանիել Երաժիշտը և Կապանի երաժշտական ուսումնարանը (Վահրամ Օրբելյան)

31 Գառնիկ Խաչատրյան (Վահրամ Օրբելյան)

32 Արարատ Պետրոսյան («Արարատյան հովեր» հանդեսից)

33 Անահիտ Բաղդասարյան

33 Սվետլանա Կոստանյան

33 Սվետլանա Նահապետյան

34 Ռուզաննա Ավանեսյան

34 Վարդիթեր Գասպարյան

34 Էդուարդ Եղիազարով և Աիդա Աբգարյան

35 Ֆելիքս Հայրապետյան

35 Հայկ Ավագյան

ԴՐՎԱԳՆԵՐ ՔՈԼԵՋԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

36 Արդյունավետ ուսուցում. քոլեջը՝ այդ խնդրի լուծման ուղիով

38 Պրակտիկաների գործընթաց և գործատուներ (Արինե Սարգսյան)

39 Պարի շունչը քոլեջում (Շուշանիկ Մարտիրոսյան)

40 Մրցույթներ, փառատոներ, գիտաժողովներ, համերգներ

42 Քոլեջի գեղարվեստի բաժնի սաների ստեղծագործություններից

43 Երեքը՝ կրթօջախի համույթներից

44 Ճանաչողական այցեր

45 Քոլեջը՝ իշխանության ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում

47 Տեսարաններ Կապան քաղաքից (լուսանկարները՝ Նվեր Չելյայի)

ՇԱՊԻԿԸ

Առաջին էջ.Կապանի արվեստի պետական քոլեջի շենքը

Վերջին էջ. Խուստուփ դիցական լեռը (լուսանկարը՝ Նվեր Չելյայի)

Տեսարաններ
Կապան քաղաքից



ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՆՎԵՐ ՉԵԼՅԱՅԻ

Խուստուփ դիցական լեռը
Դու հոյակերտ ես մեկ,
Օ՛, դիցակերտ մեր լեռ
Լուսանկարը՝ Նվեր Հեյայի